

«DROSCHAK»

REVUE MENSUELLE

organe

de la F. R. A. D.

# ԴՐՕՇԿ

№ 2 FEVRIER

1926

PARIS (France)

## «ԱՄՑ ՏԵՂԱՓՈԽԵԱՆ ԻՆՉՆԱՏԱՆԻ ԻՆՏԵՆՍԻՎԱՆՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

**ԴՆՐՁԵԱԼ ՆԵՐԳԱՂԹԻ**  
**ԽՆԴԻՐԸ**

Առանց ցատուծի անխաբելի է զիտել այն կուկորդիլոսոսնան արցունքները, որ թափում է Հայաստանի խորհրդային իշխանութիւնն ամէն անգամ, երբ խօսք է լինում արտասահմանեան ճեղ տարազիր ժողովուրդը Հայրենիք փոխադրելու ճառին: Բոլշևիկիւն բարոյակախութիւնից սերտաձ ափ ու կեղծիքի քաղաքականութեամբ նա ամէնքի առաջ կուրծք է ձեռնում, թէ ինքը անձնուժում է Հայ գաղթականութեան տառապանքները տեսնելով, թէ այդ տառապանքներին վերջ տարու համար ինքը շատ կցանկանար Հայաստանի դռները լայնօրէն բանալ գաղթականութեան առաջ, բայց չի կարողանում անել, որովհետեւ Հայաստանում, հող չկայ նրանց բնակիչներու համար: Հող չկայ նոյն իսկ տեղացիների համար, ուր միայն եկտրոնների Եւ ամէն անգամ այս վայնասունը վերջանում է նոյն լանգիբրոփ. փող տւեք, ծահիճ չորացնենք՝ գաղթականներ ընդունելու համար. փող տւեք տներ կառուցենք՝ գաղթականներ ընդունելու համար...

Արձագանք տարով այս վայնասունին՝ խորհրդային իշխանութեան գործակալներն ու ջատագովներն արտասահմանում օձիք են պատուում ի պաշտպանութիւն իրենց երեւանեան տէրերի — Ինչպէս էք կամենում — ասում են նրանք — որ Հայաստանի կառավարութիւնը այսօրայս սակաւահողութեան պայմաններում երկրի դռները բանալ գաղթականութեան առաջ: Դուք չէք լսել, որ Դարապալե Հայրը, որոնք նախանցեալ տարի տեղափոխել էին Հայաստան, նորից վերադարձել են Պարսկաստան, իրենց նախկին բնակավայրերը, որովհետեւ Հայաստանում տեղ չեն գտել հաստատուելու համար: Դուք չէք իմացել, որ Միջագետքի գաղթականութիւնը, որ նոյնպէս նախանցեալ տարի փոխադրել էր երկիր, զբալի կորստա-

նեք է ունեցել ջերմախոտից, որովհետեւ կառավարութիւնն այլ տեղ չի գտել նրանց բնակիչներու համար, բայց եթէ Արադարյանի ծահունները Վերջապէս դուք չզիտէք, որ ընդամենը մի քանի ամիս առաջ երկիր փոխադրած Յունաստանի գաղթականները դրծորչեն իրենց վեճակից, որովհետեւ նրանց ևս ծահիճների վրայ են տեղադրել հողի սակաւութեան պատճառով:

— Լսել ենք, իմացել ենք, զիտենք, սր պ. գործակալներ և ջատագովներ Բացի զրանից լսել ենք, զիտենք ուրիշ շատ բաներ ևս: Օրինակ այն՝ որ Միւրիայից Հայաստան փոխադրած որբերից շատերը ծանր վտանգների ենթարկելով իրենց՝ ապաստանել են Պարսկաստան, իսկ շատերն էլ պահածում են վերադարձնել իրենց Միւրիայ Կամ այն՝ որ Յունաստանից Հայաստան մեկնած գաղթականներից ոմանք ձեռքակալել են, որովհետեւ յանդիպել են իրենց մասնաւոր նամակներում նկարագրել խորհրդային իշխանութեան անխնամ վերաբերմունքը իրենց հանդէպ: Գիտենք նաև, որ փետրարեան ծանր դասից լեռայ էլ խորհրդային իշխանութիւնը շարունակում է իր խտրական քաղաքականութիւնը Ետեղացի և եղբայր հայերի վերաբերմամբ՝ հայ ժողովրդի ամբողջացման տեսակետի վրայ կանգնած ամէն մի հայի հոգին վրդովելով: Բայց այս ամէնը ոչ մի կապ չունի Հայաստանի սակաւահողութեան հետ: Մրանք ապացուց են միայն, որ խորհրդային իշխանութիւնը չունի այն վերաբերմունքը դէպի Հայ գաղթականութիւնը, ինչ որ պէտք է երևան բերել, եթէ տարբարակ սրտացուցութիւն ունենար Հայ ժողովրդի և նրա հրատու կարիքների հանդէպ — ուրիշ ոչինչ:

Հայաստանի հողային վիճակը և հոյ գաղթականութեան տեղաւորման պայմաններն այս փաստերով չեն բերորշւում, այլ բոլորովին այլ կարգի փաստերով: Ահա դրանցից մի բաները. —

ա. Խորհրդային Հայաստանի սահմաններում, 1917 թ. ինչ, համաձայն կովկասեան վիճակագրական տարիցույցի տւելների, ապրում էին կուրթ թուով, 1.060.000 մարդ, և ապրում էին առանց

մեծ նեղութեան, թէև իրենց վրայ էին ծանրացած 180—200 հազար թիւրքահայ գաղթականութեան հոգեւրը, ներկայումս, ըստ խորհրդային իշխանութեան վեճակազարական տեղեկութիւնները՝ այդ նոյն տարածութեան վրայ սպրուստ են գաղթական և տեղացի ընդամենը 908.000 մարդ: Լեռնաքար, պարզ հաշուով իսկ այսօրուայ Հայաստանը կարող է 180,000 նոր մարդ ընդունել իր մէջ, մանաւանդ որ նրա անտեսագործութիւնը և արտաքին յարաբերութիւններն այսօր էսպէս նոյնն են, ինչ որ էին 1917 թւին:

բ. Ընդունելով, որ Հայաստանի տարածութիւնն է 26,358 քառակուսի վերստ՝ կառանակք, որ 1917 թւին մի քառ. վերստի վրայ սպրուստ էին 40,2 մարդ, իսկ 1925 թւին՝ 34,4 մարդ: Ուրիշ խօսքով՝ որ անգամ եթէ Հայաստանի անտեսագործական պայման. նկը չբարեկուսին էլ՝ դարձեալ Հնարաւորութիւն կայ Հէնց Հիմա սպաքանակութեան խտացումը մեծացնել 5,8 մարդով իւրաքանչիւր քառ. վերստի վրայ: Իսկ եթէ ճիշդ է, որ Հայաստանում արդիւնագործութիւնը «ինտենսիֆիկացիայի» է ենթարկուած, որ ջրանոցներ են կառուցուած, ճահիճներ չորացուած և ուրիշ հողաշինական աշխատանքներ կատարուած, հասկանալի է, ե հարկէ, որ խտացումն աւելի՛ ևս կարող է մեծացնել:

գ. Ըստ խորհրդային իշխանութեան հրատարակած տեղեկութիւնները՝ ներկայումս Հայաստանում 65—70 լքած գիւղեր կան: Ինչո՞ւ այդ գիւղերը չեն յատկացուած գաղթականներին: Մի՞թէ նրանց մէջ դէ՞թ այնքան ազատ հող չկայ, որ որ բուսական լինէր Միջագետքից և Յունաստանից եկած 4—5 հազար գաղթականներին տեղաւորելու համար: Ինչո՞վ կարելի արդարացնել այս բազմիցս աղէտահար ժողովրդին ճահիճների ջրամակտուն ենթարկելու անգլութիւնը, երբ տասնեակ գիւղեր պարապ, բնակչի են սպասուած վերակենդանանալու համար: Այս ընդվիճարայից հարցերի պատասխանը մենք չենք գտնուած խորհրդային իշխանութեան ջատագովութիւնների մէջ:

դ. Որ Հայաստանում հողի տակաւութիւնը այն ծանր հանգամանքը չունի, ինչ որ ուզում են ներկայացնել մեզ խորհրդային իշխանութիւնն ու նրա արտասահմանն արբանեակները — այդ ամենացայտուն կերպով երեւան է զարխ այն քաղաքականութեան մէջ, որ մեր երկրի այսօրուայ վարիչները կիրառում են Հայաստանից Հեռացած կամ Հեռացած թաթարների հանդէպ: Նրանք քաջ գիտեն, որ այդ թաթարները փառաւորապէս կարող են տեղաւորել հարեւան մահաբերական երկրներում և մանաւանդ

Տաճկաստանում, որ այնքան Հետամուտ է իւր ամպի գաւառները կովկասեան մահաբերականներով շէնջնելու: Բայց և այնպէս նրանք մեր երկրի դռները լայնօրէն բացել են թաթարների առաջ: Ընդամենը 3—4 տարուայ ընթացքում այդ լայն բացուած դռներով Հայաստան են ներխուժել ձուտ 70,000 թաթար, մինչդեռ նոյն ժամանակամիջոցում մի քանի հարիւր հազար անտուն, անտէր, ամէն տեղից հալածական հայ գաղթականներից հազիւ 4—5 հազար հոգի են արժանացել Հայաստանի ճահիճների վրա բնակութիւն հաստատելու շնորհին, իսկ Արեշի և Նուխույ Հայրիւնը, որոնց առաջ Արրեշյանը պիտի փակած է պահուած նրանց նովակի բնակավայրերի դռները, ճահիճներ էլ չեն դանում Հայաստանում բնակելու համար... Խորհրդային իշխանութեան այս խանդավաղանքը Հայաստանի թաթարների հանդէպ մի փայլուն արտայայտութիւն ևս ունեցաւ երկու ամիս առաջ: Կարագուշուրի թաթարները ցանկութիւն են յայտնուած գաղթել Արրեշյան իրենց հաւատակիցների ձուտ Աւելի՛ յարմար դէպք հազիւ կարելի լինէր ակնկալել այդ շրջանի հողերն սպասելու և գաղթականների կարիքներին յատկացնելու համար: Բայց ինչպէ՞ս է վերաբերուած Հայաստանի խորհրդային իշխանութիւնը դէպի թաթարներ խնդիրը. — նա ամուր կերպով փակում է երկրի դռները թաթարական արտագաղթը խափանելու համար... Ինչպէ՞ս հասցնել խորհրդային մամուլից քաղած այս փաստը Հայաստանի սակաւահողութեան հետ, որ այնքան հողովում է բողբոջներին և նրանց համոտահանքի կողմից:

Փաստերի այս շարքը մենք կարող ենք աւելի՛ ևս ընդարձակել: մենք կարող ենք մասնանշել աղատ հողեր և հովակական այն գաւառներում, որոնք այսօր, հայ բողբոջներին բարեհաճ համաձայնութեամբ, դնում են Արաստանի և Արրեշյանի իշխանութեան տակ, մանաւանդ որ, ինչպէս հաստատուած են, այդ երկրներում այլևս մեծշիկեան և մուսաւթական աղաջնականութիւնը չէ տիրապետում, այլ բողբոջներն միջազգայնականութիւնը: Մենք կարող ենք վերհանել այն փաստը, որ մասնաւորապէս Շարուր-Նախիջեանում, որ հայերի թիւը կոտորածների և բռնի արտագաղթի հետեւանքով ձուտ 60,000ով պակասել է, բնակութեան համար պիտանի զատ հողեր կան, որ կարող են օգտագործել հայ գաղթականների համար, քանի որ հիմա, ինչպէս պնդում են բողբոջները, ազգային խտրութիւնները, շնորհիւ իրենց արտապետութեան, վերապել են Անդրովկասում: Վերջապէս կարող ենք ուշադրութեան հրաւիրել Սուխում

և Սոչի շրջանների վրայ, որոնք մի ժամանակ շնորհիւ Հայ գաղթականների քրտնաջան աշխատանքի ճխախտի մշակութեան անդատաններ էին դարձել, և այսօր էլ կարող են դառնալ, եթէ թող արեւ այդ աշխատանքին հմուտ կամ հակաէտ Հայերին հաստատուի այնտեղ, թէկուզ այն 3000 յոյների տեղը, որ Ռուսաստանի խորհրդային իշխանութիւնը ուղարկել է Յունաստան՝ այնտեղից Հայաստան փոխադրած 3000 Հայերի փոխարէն: Բայց կարծում ենք վերոյիշեալ փաստերն էլ բաւական են ցոյց տալու համար, թէ ի՛նչ արժէք ունի սակաւահողութեան աւաստելը, որ շարունակ թմբկահարում է ի լուր Հայութեան՝ խորհրդային իշխանութեան չկամութիւնը հայկական ներգաղթի գործում քողարկելու համար:

Այս չկամութեան բուն պատճառները դժար է հետահել: Նախ խորհրդային իշխանութիւնը վստահ էր և չէր էլ կարող վստահ լինել, թէ գաղթականների փոխադրութեան և տեղաբնակների նրախանութեան կարիքները կարելի է ամբողջովին հոգալ արտաքին, հայկական կամ ոչ հայկական աղբիւրներից և երկիւղ է կրում, թէ այս գործին ձեռնարկելով՝ ինքն ստիպւած պիտի լինի պետական միջոցներին դիմել, որ անհրաժեշտաբար պէտք է տանի դէպի իր շուրջ ծախսերի, և ամենից առաջ կամուսնիատական կուսակցութեան պահանջները համար կատարուող ծախսերի, կրճատման: Թէ այս հեռանկարն ինչքա՞ն է սրտափոխեցնում Երևանի վարչէններին — այդ երեւում է այն ողբալուծից, որ նրանք բարձրադիրն Յունաստանից Հայաստան փոխադրած գաղթականների՝ համար մի քանի տասնեակ հազար բուրլի յատկացնելու Այնուհետեւ՝ Հայ բոլշեւիկները գիտեն, որ Հայաստանի ճահիճներն էլ սահման ունենին, և եթէ իրենց յըջօրէն ընդառաջելու լինին ներգաղթի պահանջին պէտք է վերջի վերջոյ հարկադրելի դաղթականներին տեղաւորել Հայաստանի նախկին — թախտաբան գիւղերուն կամ՝ հիմնելով Ձիչերիլի ծանօթ յայտարարութեան վրայ՝ հարց յարուցել, որ նրանց տեղ տրուի գոնէ Աղբրէջանին և վրաստանին թողնուած հայկական գաւառներում: Երկու դէպքում էլ նրանք նախատեսում են վրացի և թաթար ընկերների գծկամակութիւնը, որովհետեւ փորձով գիտեն, թէ այդ «միջազգայնականները» ի՛նչ սպառնական և մանաւանդ հակահայկական թշնամի են վարակած: Եւրո, մտածում են Հայ բոլշեւիկները, արժէ՞ ինչ որ գաղթականները համար սրտնեղութիւն պատճառել այս ընկերներին և կոսկովծի տակ դնել սանդղակիսանան ազգային համբաշխութիւնը», որ իրենց «ամենահատու» գէնքերից մէկն է

Հանդիսանում հակաբոլշեւիկական պայքարի մէջ: Վերջապէս կայ և այն մտահոգութիւնը, թէ մեր գաղթականները, սնւած ու տոգորուած ազատ և անկախ Հայրենիքի զարգացումով հաշտ ուջքով չպէտք է նայեն Հայաստանում հաստատուած բռնակալական և վասալական կարգերին, որոնց տեղացի ժողովուրդը, բոլշեւիկների կարծիքով, արդէն համակերպել է: Մասնաւորապէս այս մտահոգութեամբ են բացատրուում այն արգիւնները, որ յարուցում են բոլշեւիկները բազմաթիւ Հայ գաղթականների առաջ, որոնք պատրաստակամութիւն են յայտնում սեփական ծախսով զայ Հայաստան և հաստատուել այնտեղ որ և է մէկի վրայ առանց բեռ լինելու:

Թէ ի՛նչ արժէք ունին այս պատճառները մեր ահւելի ժողովրդական ցաւի հանդէպ՝ թո՛ղ ընթերցողն ինքը դատի: Մենք հաւատացած ենք, սակայն, թէ նրանցից և ոչ մէկը հանդես չէր գալ այսպիսի մի ծանր խնդրում, եթէ չլինէր այն համատարած համոզումը, թէ մեր ժողովուրդը զբաստային համբերատարութեամբ կարող է խոնարհել իր զինն՝ տեղացող բոլոր հարաձեների առաջ: Բոլշեւիկները գիտեն, որ Հայ ժողովուրդը, կարելի է ասել առանց բողբոխի, կլից այն բոլոր դիմադրածութիւններն ու խաբարութիւնները, որ նրա հանդէպ երևան բերեց միջազգային դիմադրատութիւնը մասնաւորապէս Համաշխարհային Պատերազմից ի վեր: Նրանք համոզուած են, որ Հայ ժողովուրդը զրեթէ մոռացել է այն դաւաճանութիւնները, որ կատարեցին նրա դէմ իրենց, բոլշեւիկները՝ սկսած ռուսական զորքերը 1917-ին Տաճկահայաստանից հանելուց մինչև Բրեստ Լիտովսկի դաշնադրել և այդ դաշնադրից մինչև թիւրքերոյ իշխանութեան համաձայնութիւնները Հայաստանը ջախջախելու ու յոշոտելու խնդրում: Վերջապէս նրանք տեսնում են, որ այդ ժողովուրդն անգամ այսօր նեղութիւն չի կրում անդադառնալու այն խարդախութեանը, որ կատարեց Ձիչերիլը Լոզանում՝ յայտարարելով թէ խորհրդային երկրները պատրաստ են 250,000 Հայ տարագիրներ պատասպարելու — մի յայտարարութիւն, որ տեսել պայմաններում հաւատարագօր էր դաշնին հարաձի հայկական Դասի թիւղունքին... Այս բոլորից չեսոյ լին՞ու գարմանայ, որ Հայ բոլշեւիկները՝ մի օր 11,000 գաղթական ընդունելու խաղում տալով, միւս օրը իրենց խոստումը ի չէք յայտարարելով՝ իսկական կատի և մկան խաղ են կատարում Հայ ժողովրդի հետ: Կամ ինչ՞ու գարմանայ, որ նրանք, Մոսկովայի նմանութեամբ, ամենաթող ընդիմադրութեան գծով ընթանալով՝ փոխում են Հա՛

յատասնի դեմերը Հայ գաղթականութեան առաջ, որպէսզի այնտեղ, ի հաճոյս արքեպիսկոպոստի ընկերներն, որքան կարելի է շատ տեղ մնայ թաթարներ չհաճար...

Եթէ ուզում էք ներգաղթի խնդիրը շարժել մեռած կէտից՝ պէտք է ամենից առաջ առաջ խախտե՞ք այն համոզումը, թէ կարելի է ուղկերջ խաղալ Հոյ ժողովրդի Գաղատարի Հոտ և անպատիժ մնայ: Այն օրը, երբ այս տեղի ունեցաւ՝ թէ՛ Հող կոտակի Հայ գոյթականներն քնակեցնելու և թէ՛ միջոցներ նրանց փոխարութեան և տեղափոխման ծախսերը հոգարութեամբ համար:

Մի խնդիր է սա, որ զի մասին Հայ ժողովուրդը պէտք է վերջապէս մտածի և լուրջ մտածի:

## Փ Ե Տ Ր Ի Ա Ր Ի 18

Այս ամիս 18-ին լրանում է Հինգ տարին այն փոթորկոյտը օրերից, երբ Հայաստանի ժողովուրդը՝ մի անմտան ընդդուճով՝ Թաթարու բռնազերծ քաղաքական դէմ և հերոսական գիմայրութիւն ցոյց տեց կործար բանակի կատաղի զորհներին:

Հայաստանում լայն զանգուածները շարունակում են ապրել ու զգնորսել Փետրուարի 18-ի յիշուցութիւններով: Ո՛ր մի պրօպագանդ, փաստերի և ո՛ր մի խելագութեամբ չեն կարող խախտել նրա համոզումներն ու հաւատը: Այլ է դրսևիւնը արտասահմանում: Գաղութահայութիւնը մօտից ծանօթ չէ Հայաստանի կեանքի բոլոր դեպքերին և հեշտութեամբ կարող է ենթարկել պրօփակախօսի: Բռնազերծումը շատ են աշխատանք հաճախեցնելու աճելը, նր փետրուարեան ջարձումը ոչ թէ համաժողովրդական վայրոյթի առաջնորդն էր, այլ «Գաղութական քաղաքական», «կորսած իշխանութիւնը լիա խելով» նպատակով: Եւ փաստերի աղաւաղումն ու կեղծիքը զլխաւոր դէպքն են նրանց ձեռքին:

Հինգամեայ տարեգրածը առիթ է ապիս ձեզ մի անգամ ևս պարզելու այն հանգամանքները, որոնք ծնունդ տուն Փետրուարի 18-ին և այն գաղափարները, որոնցով ոգնորսում էր անպատմար ժողովուրդը: Ամանց կրթի ու յուզումի, sine ira et studio նկատագրից այն միջանայրն ու դեպքերի; որոնք ճակատագրական գործացրուճով յանդիմն համաժողովրդական արժանաբերութեան ընդդէմ խորհրդային իշխանութեան: Եւ որպէսզի պատկերը լինի աւելի պարզ ու անքողական, սկսենք մի քիչ հետախօսի:

1920 թ.ականը Հայաստանի համար սկսեց, համեմատաբար, բարեկատու պայմաններով: Երկիրն արդէն Հանրապետութիւն էր: Սահմանները տարածւած էին մինչև Կողբ ու Կարս Ուրբան Ամբողջ Կարսի շրջանը, Սուրմալուն, Նախիջուան ու Քանիզուրը: Հայաստանի մէջ էին, և թրջահարութիւնն արդէն Նստել կը հողը վրա և ներքի շինարար աշխատանքն Պետական մեքենան, ընդհանուր տար

մամբ, կարգորդութեամբ էր և զարգանում էր օր օրի վրա: Երկիրը վերաշինում էր: Յովի ուրուականն այլևս կորւած չէր ժողովրդի գլխին: Սկսել էր աշխատանքի եւ ու զմո, ժողովրդական տնտեսութիւնը վերականգնելու ճիգ և նոր տնտեսութեան հիմնադրումը: 1920-ի գարնանը ամբողջ Հայաստանը բռնած էր գոշտային աշխատանքների տնտեսութեան կառավարութեան խնդիր վարել եր Կանկարքի այդպործութեան, բարձրի ու նիւտտի հասկումեան համար և 375,000 փութ սերմանը էր բաժանել ժողովրդին: Նոր բերքը երկիրը պետի սպահուելու համար և անտանուներ կերով:

Յուսատու էին Հայաստանի գործերը և միջոցապիսնանագրութեան աշխարհում: Թիւրքիստի իսպառ քաղաքում անձնատուր էր եղել յաղթողներ կամքն: Մշակուած էր թրքական զաշնուրներն երի աճելից աւելի անվտանգ կէտ համարում էր ծանազունը: Հայաստանի անկախութեան թիւրքերը համոզուած էին Հայաստանի անկախութեան անխուսափելիութեամբ և սակարիւմ էին միայն սահմանների համար: Հայաստանը դարձել էր լայն հետաքրքրութեան առարկայ: Անկախագրելու խնկարկութեան էր Եւրօպիայի պարտութեամբ թուրք խաւերի մէջ: Սկստել էր 50 միլիոն դրարի փոխառութեան և Ռուսո Գրանտի շարժումը, բացած էին մի շարք ցանկանագրութեանը նա յայտատանի օժնոկարութեան էին ցոյց տալու եւ որտային շրջանները: միայն Անդրկասպից մօտ 11 միլիոն դրարի որ- ժողութեամբ ալիւր եւ այլ կարգի մթերքներ ուղարկեցին Հայաստանին:

Եւ մինչ Հայ ժողովուրդը իր բոլոր հուանքներով լարւած ձգտում էր կազմակերպելու եւ անբացնելու նորատեղծ պետութիւնը, ընդարձակելու նրա սահմաններն եւ սպահու- վելու միջազգային դիրքը, տնկին Հայ բոլշևիկները յաճախում էին նրան կրկն լարում: Նոյն այդ պետութեան դէմ և աշխատում էին նրան պակեցնելու: Սպայէս, երբ 1919 թ. Յուլիսին Հակական բանակը Բեռլին-Վեդլի տակ պոշտ- պնում էր երկրի սահմանները ապտամբւած թաթարների դէմ, Հայ բոլշևիկները Երեւանում ցրեցին թուացիկներ, որոնցով կոչ էին անում գլխորդներին բնաբանալ կառու- վարութեան դէմ: Այնուհետեւ նրանք գահակի կերպով շարունակեցին պատրաստել ընդհանուր ապտամբութեան: Այդ նկատակով դրայց դրած ու զենք են ներմուծում Հայտու- աւն, զորանի գործակախներ պահում երկրի զանազան կա- ճերում: Աւ Մայիս ամսին, երբ ժողովուրդը մեծ մասը զբաղւած էր զաշտային աշխատանքով, մի շարք քաղաքներում առաջ բերին ապտամբութիւն: Ալեքսանդրապոլ, Կարս, Նոյ-Ռոյս- զէս, Գիլիզան դարձան քաղաքացիական կռիւների թատե- բաբն: Աճումնայով Ալեքսանդրապոլի կայարանում, գրահա- պաւ փոսքի մէջ, բոլշևիկ պարարտները կազմեցին մեծ մասնակար յեղիւր և իրենց կողմը դրակելով տեղական վիւտրների մի մասը՝ հեռագրական պահանջ ուղարկեցին կառավարութեան՝ իրենց յանձնելու իշխանութիւնը: Մաս երկու շաբաթ տեւեց ապտամբութեան մշուումը: Աճեի տեղ ժողովուրդը՝ թողած մած ու մուրճ, ինքնուրուկ վերադուճով՝ շարժեւ զբռտաները դէմ եւ օգնել Հանրագրութեան գոր- քերին խեղկելու խառնութեանը: Սովախն, մայիսին շարժ- ան հետեւաբորտները շատ ծանր նստեցին երկրին, լատկար:

ւեց կեանքի քննական ընթացքը, որոշ-անգ անաւարտ մնա-  
ցին դաշտային աշխատանքները, սեռ չտեղիք առաջ եկան  
Ք.գ սկսեան խմբումները, որոնք սովորեցին կառավարութեան՝  
բանակը գրադրեցին ներքին կռիւներով, արտաքին աշխարհ-  
հում ձեռնադէպ հարաւանք կայստանի պետական վարչը  
նւ այլ այն ժամանակ, երբ որոշուած էր ձեռք երկրի ձակա-  
տակը:

Մայիսին շարժումները ճիշտնը չկանգնեցրեց Հայ  
բաշխիկներին՝ նրանց պարտադրելուները փոխան Արքեպիս-  
պոս Թաւրից շարժումներին դուրս լարել կայստանի դէմ  
Հայ հոմոնիստներին յնկանով էր, որ Յիւլիէրն շատապարեց  
Եանթի պատերազմութեան Հետ արդէն պարտաւարած դաշ-  
տակիրը Հայ հոմոնիստներին պահանջով էր, որ 11-րդ կոր-  
միր բանակը արաբշաւ շատապարեց դէպի Ձախեղուր ու Յա-  
խիշեան, այն պահուն, երբ Հայկական զորքերը ծոռնուած  
էին նախիջեանին, եւ վերջինիս ներկայացուցեցինք ձեռնիկ  
ձեռն ներուան հաշտութեան կողմնակցութեանը սկսեալ Գա-  
մար Հայ հոմոնիստներին էլի, որ ծածուկ, թառցիկները ու  
ճաւերի միջոցով անքնդհատ պղտուած էին պարբերական և  
ուսու հանրային կարծիքը ընդդէմ կայստանի Հայ հոմո-  
նիստներին էին, որ Քաղաւած ու Գաղախած զորամասեր էին  
կազմուած Հայաստանի վրա յարձակուած զորքերու հոլատակով  
նւ այլ առ ժամանակ, երբ Յիւլիէրն բաշխիկները օգնու-  
թեամբ՝ պարտապարեց էին պարտաւարած կայստանի դէմ:

Սեպտեմբերի 23-ին Ռեպուբլիկայի Գործերը  
շարժեցին կայստանի վրա՝ Սիւնեաց Հայ-թրքական պա-  
տերազմը Հայ ժողովուրդը իր բոլոր դատակարգերով ու կու-  
սակցութեաննրով ահապանգ Հնչեղից եւ փարեց Հայրենիքի  
պաշտպանութեան գործին Մինչդեռ Հայ բաշխիկներն էին,  
որ էլ աւելի սատակարարին իրենց կատարող յարձակումները  
Հայաստանի դէմ կայստանի դէմ էին այլ պատերազմուած  
և թափար ու վրացի հոմոնիստները, Բագրի «Կոմունիստ»-ի  
կողմ. Յի համարուած կարգուած ենք Արքեպիստի Արհեստ.  
Միութեանը նախապահութեան կողմ՝ ուղղուած ամբողջ  
աշխարհին, որ, ի միջի այլոց, ասում է.

«Այն ժամանակ, երբ ամբողջ Արեւելքը բռնուած է ա-  
պստամբութեան բացով, երբ Արեւելքի ժողովուրդները համա-  
գրածորը կրօնքնուած էր արեւելեան ժողովուրդներին ոտքի  
կանգնելու Կոմունիստական Ինտերնացիոնալի դրօշի տակ  
միջազգային ինդերիալիզմի դէմ վերջին վճռական կռիւ-  
րաւու համար. այց՝ ժամանակ կայստանի սպիտակ առաջա-  
կալին կուսակալութեանը հըով ու քրով լստիկով ամբողջ  
յեզպիտակական կայստանը, քայքայելով բոլոր բանակաւան  
արհեստակցական կազմակերպութեանը, անցը-ամեւերիկան  
իտղերիալիստներին Հետ միասին նոր Գողգոթա է պարտա-  
սուած արեւելեան յեզպիտակական գանգաւաններին... Մենք  
ուխտել ենք տալիս կայստանի արեւմտեան եզրած բան-  
ւարա-յեզպիտակական գանգաւաններին չլիցաւան, այլ յամբարներն  
ու համբարներին հաւաքել իրենց քայքայելու կողմ  
ուժեղ իրենց դատակարարային մարմիններին շուրջ արթուն  
ուճկիդիկ հոմոնիստական կուսակցութեան ձայնին, որ լա-  
ւազոյն անգամները իրենց Հերոսական ճահով քայքայն պա-  
տաութեան ճաբան. ՍՄԿՀ կայստանի բանակներին ու  
գիւղացիներին վրա բռնութեան կատարակներին:

Այս տողերը հրատարակուած էին Լուսն. Յի, երբ  
Յիւլիէրն արդէն Սարքաւանիշուած էին և կայստանի ժողո-  
վարը արդուած էր ահապար ապրանքային օտերը Հայ հոմո-  
նիստները՝ միացած թափարներին՝ խմբուած էին կայստանի  
թիւրուքին նախ այն ժամանակ, երբ Յիւլիէրն բաշխիկները  
ւել էին Կարսը և շարժուած էին Ալեքսանդրապոլի վրա  
«Կայստանի Կոմունիստ» և Բագրի «Կոմունիստ» թիւրքերը  
զրուած էին, որ քեմալական արշաւանքը ոտի գաղափարա-  
պաշտպանական նպատակները, այն է՝ Կայստանի իրենց  
թիւրուքը. Հեշտուցեւ Անդանուի և Յուսուպուսի Փոքր  
Ասիայի վրա զորքած յարձակումներին կիմարելը» և «ճիւղ»  
գաճայն օրինակուած դիւրարական տեսակետը:

Հայ-թրքական պատերազմի ամբողջ տնտեսութեան ըն-  
թացքին մեկ ձագ բաշխիկ չբանակեց, որ չմըք պաւած օգնու-  
թեան, դոնեք բարեկամական խառն ատեր հայերին Ընդհա-  
կուսակը, նրանց ամէն կերպ աշխատուած էին թուրքերը  
Հայկական բանակի թափը, երկրի ներքը առաջ բերել խո-  
վարեաներ և այլպիսով Հեշտուցեւ Պետրիկ Գարաբէրի  
զորքը Այժմ Հայ հոմոնիստները պարձանքով խտրութեան  
են, որ պատերազմի ընթացքին, իրենք պրօպագանդ են  
արել Հայ զորքերի մէջ և աշխատել են կարգաւորել Հայ-  
կական բանակը՝ Անիին դեմ, կայստանի վրա արշաւող  
թիւրք բանակի մէջ գտնուած էին բաշխիկ գրգռականներ,  
որոնք օգնուած էին թիւրքերին իրենց կարհակալներով ա-  
յուցեմաններով և զբաղուած միջոցակով աշխատուած էին հա-  
ւատացելի Հայ զորամասերին, որ իրենց վրա շարժող  
թիւրքերը թշնամները չեն և գալիս են կայստանը ազա-  
տեալ «գաղափարները իշխանութեանը:

Միւսնայն ժամանակ, օգուտեալ կայստանի համար  
ստեղծուած յուսահատական գրաթիւրքեր, Բագրի Հայ հոմո-  
նիստները աշխատեցին արագացնել կայստանի խորհրդա-  
նացուած, այլ նպատակով մի շարք միջոցներ գումարեցին  
Բաղուած և իրենց արշաւուած յայտնելով Մուսուլի խորհրդին  
օգնութեան կայստանը յեղաշրջելու համար: Ինքը Անդրկով-  
կասի խորհուրդներին նախագահ Մ. Յիւլիայան նորերս,  
Նոյն, 29-ի տարեկարձի աւթիւ, Բագրի «Կոմունիստ»-ում  
նկարագրեց այն բոլոր դատարարութեանը, որ բաշխիկները  
յղացան Հայ ժողովրդի գլխին՝ կայստանի կեանքի ամենա-  
ահաւոր վայրկեանին Հայ հոմոնիստներն այլ ձաթին մինչև  
օրս լուած էին դեմապարտեան:

Քեմալական արշաւանքը Հայ բաշխիկներին համար  
ձառնայն մի յարձար գէնց կայստանը խորհրդանայնելու,  
և նրանք շտապեցին օգտագործել նրան՝ առանց ձառնող-  
ւելու, թէ դրանից տուժողը կը լինի Հայ ժողովուրդը: Նւ  
եթէ կայստանը պարտուած անհաւասար պատերազմուած, այլ  
պարտութեան մէջ մի կարեւոր բաժին էլ ունեցան հոմո-  
նիստ հայերը, որոնք կայստանի խորհուրդուան ղեկով, Հայ  
ժողովրդի գլխին վրայով հասան իշխանութեան:

Բաշխիկ-քեմալական զորակալութեան և Կարսի ու  
Ալեքսանդրապոլի անկան հետեւանքով կայստանի համար  
ստեղծեց անհաւանք զուրկութեան Գարաբէրի ներքը, պար-  
տութեան դուրսը՝ միջազգային ճակատուած Աւր երկրը  
նք Հանգիստաւ Գիկա. 2-ի պիսալը մեզպիտակութեան չէր  
այլ, օճ էլ պետական հարաւած, այլ, ըստ ձեռն պարզ իշխա-

նութեան փոխանցումն ձի կառավարութիւնից ձի ուրիշ կառավարութեան, որը ունէր ընկերային տարբեր դասանոց, բայց յանձն էր առել պահպանել հոյ ժողովրդի վեհապետական իրաւունքները Ահա այդ պիտը, որ ստորագրեց խորհրդային ներկայացուցիչ Լեզարանի և Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչների միջև:

« 2 Դեկտ. 1920 թ., ձի կողմից Ռուսաստանի Խորհրդային Դաշնակցական Սոցիալիստական Հանրապետութեան վրազոր ներկայացուցիչ ընկ. Լեզարանը, Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի լիարտոնութեամբ, ի գիճոց Ռուսաստանի խորհրդային կուսակցութեան, և միւս կողմից ընկերներ Դրոն ու Տէրտէրեանը ի գիճոց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ կնիցելին Համաձայնութիւն Հետեւեալի մասին.

1. Հայաստանը յայտարարում է Անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն:

2. Մինչև Հայաստանի խորհուրդների Համագումարի հրահրումը կազմուած է ժամանակաւոր Ռազմա-Յեղափոխական կոմիտէ, որին կանցնի Հայաստանի բովանդակ իշխանութիւնը:

3. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնն ընդունում է, որ Հայաստանի Սօց. Խորհրդ. Հանրապետութեան Հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են. — Երեսանի նահանգը իր զորք գնահատելով՝, Կարսի նահանգի մի մասը, որը գինւորական սեսակէտից կապահովէ երկաթուղու տիրուպետութիւնը՝ Ջաջուր կայարանից Արտա-կայարանը. Գանձակի նահանգի Ջանգիզուրի գրաւար և Լազախի գրաւար՝ մի մասը Սգստ. 10-ի Համաձայնութեան սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնուած մինչև 1920 թ. Մեպտ. 28.

4. Հայկական բանակի Հրամանատարական կազմը չի ենթարկուած պատասխանատւութեան այն զործրի Համար, «: կատարել է բանակի շարքերում ձիչև Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը:

5. Դաշնակցութեան և ուրիշ սօցիալիստական կուսակցութիւնների (Ս.Յեղ. և Ս.Դեճ.) տնդամերը ո՛չ մի Հաւսմանքի շարքի ենթարկելին կուսակցութեան պատկանելու և կոմունիստական կուսակցութեան գէճ մղած կուլին մասնակցելու ու խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կատարած գործերի Համար:

6. Ռազմա-Յեղափոխական Կոմիտէի մէջ մտնում են Հի՛ւզ անգամներ կոմունիստական կուսակցութեան կողմից նշանակուած և երկու անդամ ձախ-դաշնակցականների իրճաբակից՝ Համաձայնելով կոմունիստական կուսակցութեան Հետ:

7. Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Անկախութեան պաշտպանութեան Համար անհրաժեշտ զինւորական սեփերը:

8. Սայն Համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հո-

աստանի Հանրապետութեան կառավարութիւնը քաշուած է իշխանութիւնից: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով՝ մինչև Յեղափոխական Կոմիտէի զաւը, անցնում է զորահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում ընկ. Դրոն ու Տէրտէրեանը, որի կողմից Հայաստանի զորահրամանատարութեան կից կօմիտար է նշանակուած ընկ. Սըլիլիւնը՝»

Այս Համաձայնագրի Հիման վրա բողշեակները եկան ու տիրացան Հայաստանի իշխանութեանն նախկին կառավարութեան Հեռագրական Հրահանգի վրա ժողովուրդը ոչ մի տեղ դիմադրութիւն չարտա Թէև գրաւար, ներքին կուսակածով ու անհանգստութեամբ՝՝ ամէն ոք Հանդարտութեամբ ընդունեց եկարներին: Սպասուած էին տեսնել Հին Ռուսաստանի ներկայացուցիչներին: Երազում էին գէճ տարրական ապահովութիւն ու Հաց ստանալ առուններէց:

Հայ կոմունիստներն եկան, և վակխանուլիան սկսեց: Համաձայնագրի և ո՛չ մի կէտ չէր կարծեցնի Երկրի անխախտութիւնը ջնջելուց: Սահմանները ընդարձակուած չեկան: Թարբերը զուրս չեկան Ալեքսանդրապօլից: Հանրապետութեան շըջանի գործիչները ենթակիցելին վարագ Հուլանքի, — և բանակը լցցեցին Հազարաւոր մտաւորականներով, զիւզակներով, բանւորներով ու առևտրականներով: Հայկական բանակը լուծեց, և սպայութիւնը, լաւելի քան 1500 Հոգի, խարէութեամբ աջորուց Ռուսաստանի ներսերը: Մայր ուխն անվիճել թանարուստներ, թալան, Հարուստահարութիւն ու սպանութիւններ: Դրեցին անօրինակ տուրքեր, և զիւզակն ուղարկելին գտածից զորամասեր տուրք չուող զիւզակներին դատժելու Համար: Անոյճ էլ կիրը առնեց Ձէկայի Հսիզուութեան ու սանձարձակագետութեան տակ: Լրտեսութիւնն ու մտանութիւնը վերածեց սխտեմի: Աճէն մի կոմունիստ միտածանակ և Ձէկայի գործակալ էր և ի պաշտօնէ պարտաւոր էր Հսիկ ու ճառնել «Հակաիեղափոխականներին»: Վերացեցին բոլոր սպանութիւնները. ծանու, խողով, խղճի պատանութիւն՝ որդիւնեցին, իրրև «բարեփոխական նախապաշարուստներ»: Եւ Հայաստանը, առանց չափազանցութեան, վերածեց բանտի, որ ամբողջ ազգայնականութիւնը բանտարկեալ էր և մի իւրմը եկար կօմունիստներ բանտարկեալ պաշտօն էին կատարում:

Շղան փորձեր այս ահաւոր կայութեան սուսն առնելու Համար և գէճ մտածող մնդգնիլու աէժիճը, որպէսզի յուսահատութեան մայրահեղ սասիճանին Հասած ժողովուրդը չնետի բողաքացիական պատերազմի կրկը, բայց այդ փորձերը Հանդիպելին միայն Հեգնանքի անսպասելի յաջողութիւնից արքեցած իշխանութիւնների կողմից: Բազաքացիական պատերազմ. իրենց փնտաւած էլ Հէնց այդ է: Անհրաժեշտ է, որ Հայաստանն էլ սնցիլ քաղաքացիական

\*\*) Այս Համաձայնագրի քիպկը տպւած է Ռուսաստանի արտաքին կործոց գործուարութեան պաշտօնական Հրատարակութեան (Վեդոլուճու Գործոց Դաշնագրերի) 3-րդ պրակուճ, Մոսկու, 1922 թ. No 79 էջ, 14—15: Ըսել է այդ Համաձայնագրը ձեւակոծեղն Ֆիսցել է իր ուժի մէջ և պաշտօնտպեալ Գանաւած է Մոսկույի կողմից, թէև, ինչպէս կը տեսնենք, Հայաստան եկած կօմունիստները բոլորովին Հակառակ կերպով վարեցին:

(\* Առեւիմ, և Եարուր-Նախիջևանի ու Սուրճալուի գաւառները, որոնք կազմուած էին Երեսանի նահանգի մասը:

կուրի բողիք, հարկաւոր է, որ նշայտանում էլ բարձրագույն խաչի արհեստը հոսի, որպէսզի խորհրդային իշխանութիւնը ամբողջապէս ու խորանայ, Եւ, իրօք, ամէն օր գոմարտող բոլոր միակիցներում, «Կոմունիստ» թերթի բոլոր խմբագրականներում ու յօդանոցներում միայն մէկ իշխող միջոց էր արտայայտուում — քաղաքացիական կուրի անհրաժեշտութիւնը: Անկեղջ ծաղրի առարկայ էր արուած Հայաստանի անկախութեան զագափարը, հայհայտուում ու սրբապաշտուում էին ժողովրդի բոլոր ներկայան հասկացողութիւնները և անհնագոհ հիկ մեայ մարտահրուէր էր ուղղուած երկրին: Եւ արդէնքը շատ շուշացաւ: Ժողովուրդը չըմտացաւ բունութեան, թալանին ու իր իրեաների զագանային ստեղծարարին և մի մտորու պէս ոտքի ելաւ: Փետրուարի 18-ին Հայաստանում խորտակեց կոմունիստական անարդ յաճը ու նորից հաստատեց ժողովրդական իշխանութիւն: Եւ այնուհետեւ 42 օր շարունակ հայ ժողովուրդը ճիշդ հերոսական պայքար էր մղողային իրաւունքի ու ազատութեան պաշտպանութեան համար և տեղի տւեց միայն զբաղեց կողմ առական գերզանց ուժերի մշտնան ստիլ: Եւ հեռանալով Արարտեանի դաշտից, երկուս ու կէս ամիս էլ շարունակից ինքնապաշտպանութիւնը Լեռնահայաստանում, որ Գեղու, Չ-ի սկիւղի յետոյ էլ պահպանել էր իր անկախութիւնը: Գոյից համապայլին էր, համաժողովրդական այս բաւերի ամենալայն առւանձն: Բայցի կոմունիստները և սակաւաթիւ ուսմանից, քաղաքական բոլոր հասանքները, բոլոր ժողովուրդները մտակցեցին կուրիներին, նոյն իսկ թաթարները, որոնք միշտ վերտալահ զբերուած էին գանուած, իրենց Ազգային Բորհրդի կողմից ներկայացուցչները դրին Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի մէջ: Եզրահերք կազմեցին առանձին կամուրջական զօրամաս: Ռազմաճակատ ուղարկեցին յատուկ կամուրջական զօրամաս և ուսմակալները, որոնց Հայաստանի Կոմիտէն պայքարի առաջին շարքերում էր բաշխեցիկները զէմ: Բոլոր կուսակցութիւնները հուսաբար — դաշնակցական, սօցիալիստ-յեղափոխական, սօցիալ-դեմոկրատ, ուսմակալ, ժողովրդական: Հնչակեան կազմեցին ճակատի Օգնութեան, պրօպագանդի ու պրօպագանդան կոմիտէ, որի նպատակն էր ոյժ տալ հակաբաշխեցիկեան կուրի: Ետտ քիչ անգամներ հայ ժողովուրդը այլպիսի միտանութիւն և բուռն թափ էր երևան բերիլ...

Այստեղ տեղը չէ, ի հարկէ, այդ սպասածութեան պատմութիւնն անկու — Կրան մէջ փայլուն և ուսանելի շատ էջեր կան — բայց վճռական կերպով պէտք է ասել, որ նրա հեղինակը եղան միայն և միայն բաշխեցիկները: Եթէ նրանց զէթ նազգային չափով յարգելին իրենց սօրազրած պայմանները, մի քիչ ասելի հարազատ ու սրբապաշտութեանը ցոյց տալին զէպի ժողովուրդը, գոնէ Հասկանային, ինչպէս որ այժմ են Հասկանցի, որ Հայաստանը զուտ զիւղացիական երկիր է և հեռուաբար, այնտեղ անթայլաբիւր են այն էկզիլիմէնտները, որոնք կարող են այլու բունարական կենտրոններում, եթէ, ստուժ ենք, բաշխեցիկները Հայաստան մտնելին ա՛յ իրեն ևսանող բունպայմաներ, այլ ժողովրդի ցաներն ամբողջու ցանկաւեանք տողարած մարդիկ, փետրարեան սպասածութիւնը տեղի չէր ունենայ, և բոլոր ստեղծարարն ուժերը կը մնային երկրում՝ լճաւ

հայրենիքի վերաշինութեան գործին: Փետրարեան սպասածութիւնը ամբողջապէս արհեստը է բաշխեցիկեան քաղաքականութեան: Ելլ՝ խոստովանեցին և իրենք՝ կոմունիստները: Գոյկատի փոխարքայ Օրջոնիկիձէն, փետրարեան շարժման մշտնաբն յետոյ, բարձրաձայն յայտարարեց, որ հայ կոմունիստներն իրենք էին մեղաւոր պատահած զէպ-քերի համար: Այդ հաստատուեց և Հայկոմկուրի շարքերում սուրած վիճարանութեան ընթացքին, փետրարեան զէպ-քերից անմիջապէս յետոյ: Եւ, վերջապէս, Լէնինն ինքը՝ Գոյկատեան կոմունիստներին ուղղած իր հաշակաւոր նամակով նախ բանն էր վկայուժ: Եւ, իրեն հետեւանք այս փաստի, փետրարեան սպասածութեան զլխաւոր հեղինակները՝ Գասան, Աիս և ուրիշներ, ստիպուած եղան հեռանալ Հայաստանից:

Այս է ահա Փետրարի 18-ը, որն այսօր խորհրդանշիչ է դարձած հակաբաշխեցիկութեան և որի զէմ այնպէս ասած են կրճատեցիւմ կոմունիստները: Փետրարի 18 ունեցաւ մի շարք անմիջական հետեւանքներ, որոնցից յիշենք մի բանիսը:

Ամէնից առաջ՝ նա, ինչպէս կայծակ պարզում է ինդիլէ օղը, մարքեց Հայաստանի միջուրտը, որ թւանաւորել էին բաշխեցիկները: Փետրարեան ընթացումից յետոյ խորհրդ. Հայաստանի ներքին քաղաքականութիւնը կտրուկ կերպով փոխեց, և իշխողները փոխակալ դիմելու բունութեան, ստիպեցին ժողովրդին սիրաշահել ու շողորթթել: Ենեւած ու անօթահար՝ հայ կոմունիստները սանձահարեցին իրենց կրքերը և Մոսկուայից եկած հրամանի վրա՝ սկիզբը դրին աւելի մեղմ քաղաքականութեան:

Այս հանգամանքը մեծապէս զարկ տւեց Հայաստանի ժողովրդի ինքնապաշտպանութեան և սեփական արժանիքի գնահատութեան: Պարտած ձևականութիւն՝ ըստ էութեան յաղթող ժողովուրդն էր: Բարոյական այս յաղթանակի դիտակցութիւնը էլ՝ աւելի ուժեղացրեց նրա հուսան և կորովը:

Փետրարի 18ը շատ խոշոր նշանակութիւն ունեցաւ և Հայաստանի անկախութեան զագափարի ժողովրդականաց ման ու խորացման սեռակէտից: Ցարեպային կերպով մեռնող առած սպասածութիւնը Հէնց առաջին վայրկեանից տողարած էր Հայաստանի անկախութեան վերականգնման զագափարով և մինչև վերջ էլ ընթացաւ այդ դրօշակի տակ: Ապաստածութեան արտող բունութիւնն ու յայն տարածման նպատակը և այն հանգամանքը, որ ժողովուրդը փորձնական կերպով և շատ ցայտուն փաստերով տեսաւ ու շօշափեց անկախ և խորհրդային Հայաստանների միջև եղած տարբերութիւնը. անկախութիւնը էլ՝ աւելի զարձաւ սիրելի ու ներկայան:

Փետրարի 18 շօշափելի անդրապարձում ունեցաւ և Հայաստանի միջազգային դրութեան վրա, առաջին անգամն էր, որ այնպէս համարաշխն ու մողեպիտեւ հայ ժողովուրդը կրուժ էր անկախութեան համար և կուսուժ էր ու՛ժ գէժ — Ռուսաստանը խորհրդանշող խորհրդային իշխանութեան Այլևս կասկածի տեղ չէր մնում, որ անկախութեան զագափարը մտել էր անհնարուս զանգաւմներին արեան ու զիտակ

ցութեան մէջ, Հայ ժողովուրդը ձգտում էր անկախութեան որի համար պատրաստ էր և զոհեր տալ:

Այսօր ազգիպէտէն շար կիրք կայ հաւատարման փետրաւարեան յեղափոխութեան շուրջը: Փորձող ճարտիկ Հրապարակի վրայ են գիւտ, հուսալիցական պայքարը շատ է սրտած, որպէսզի իր հակառակորդները կարողանան անկաշտու խօսք առել Փետրեարի 18-ի ճարտի Մտկայի, կոնցրէին տարիներ, կրթելու կը հանգստանան, և յաջող սերունդները Հիտցունով կը կարդան Հոսոց նորագոյն պատմութեան ամենափոքուրդ էջերից մէկը:

### ԹԻՒՐԲ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

## Յ Ա Ր Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ն Ն Ե Ր Ը

Խորհրդային-Քրքական Փաշնագիրը, որ ստորագրեց Դեկտ. 17-ին, Փարիզում, Ջրէշրինի և Թէֆլի (Ռուշտի) կողմից, հանձնապարք քիչ ուշապուրեան ստակոյց եղաւ հայ մասուկի մէջ, Բաշէիկեան թերթերը դաշմանափակեցին միայն զոհարանական մտութեանքերով՝ խորհրդային դեւանագրութեան «մի նոր յաղթանակ»-ի առթիւ, գաղութաւայ ազգայնականներն ու բուրժուա-պահպանողականները մի անգամ ևս վեր հանեցին Մօսկուայի, Հետեւաբար և Երեւանի, վարիշերի հետառես ու խօհեմ քաղաքականութիւնը: Աւ միայն հակաբօլշէիկ մտնուը փորձեր արաւ պարզելու կնքած դաշնագրի իրական արժէքը, բայց նա և ընդհանուր գաղափարներն ևս իրենց մտայ շտապութեամբ: Թիւրք-խորհրդային յարաբերութեան էութիւնը մտայ շտապութեամբ և լայն դանդաճների համար պարզ չեղաւ, թէ Ջրէշրին-Թէֆլի Ռուշտի ստորագրած թուղթ ինչ նորութիւն մտցրեց Մօսկուայի և Անդրպայի փոխյարաբերութիւնների մէջ, չէ՛ որ նրանք առանց այն էլ դաշնակից էին ու մասիկ բարեկամներ:

Աւ նոր չէ, որ բարեկամութիւն է հաստատուած Թիւրքերի և Բաշէիկեանի միջև: Նրա հիմքը գրեւէ շտապազուգ, քեմալական շարժման առաջին շրջանին, այն օրերին, երբ դեռ Իթթիլհատն էր թիւրք ազգայնութեան գազափարախօսք, թէկ նրա ղեկավարները հպարտական էին Թիւրքիայից գաշնակիցների երեսից: 1918-ի գարնանը, յայտնի բօլշէիկ Քարլ Ռադկեյը, խորհրդային իշխանութեան կողմից բանակցութեան մէջ է մտնում Իթթիլհատի Գեմալիսա ապստոյնած պարագլուխների հետ, ինչպէս Թալաթի, Էնվեր ևն Այլ բանակցութիւնների հետեւանքով էնվեր փաշան արկածալից ճամբորդութիւն է կատարում Մօսկու և մտնում պաշտօնական յարաբերութիւնների մէջ խորհրդային իշխանութեան ներկայացուցիչների հետ: Այլ քայլերի հետեւանքով Հաստատուում է շերժ բարեկամութիւն Իթթիլհատականների և կօմունիստների միջև: Փորձակցութեան նպատակը դժար չէ կուահել. երկու կողմերն էլ ունէին ընդհանուր թշնամի՝ դաշնակիցները և յատկապէս, Անգլիան, և ահա հասարակաց թշնամու դէմ կուելու նպատակով ստեղծուած է սերտ գործակցութիւն թիւրք ազգու-

նականների ու կօմունիստների միջև: Աշխարհային յեղափոխութեան ռահիլաները» և ջարդարարի համաշխարհային հոշակ ստացած, թէկ ճիլիոն Հայեր կողորդ և անբողջ թիւքահայութիւնը բնագիծու որոշում հանող փաշաները եղբարբուն ձեռք են մեկնում միմեանց և կնքում սրտատուէ համերաշխութիւն:

Երկուստեք թափած աշխատանքները, վերջ է փերջոյ ստանում են պաշտօնական ձեւ և 1919 թ. Դեկտ. 27-ին, Մամոնում, ստորագրուած է գաղտնի դաշնագիր խորհրդային Ռուսաստանի և թիւրք ազգայնական ներկայացուցիչների միջև: Ըստ այդ դաշնագրի «Երեւեան և Միջին Անատոլի մէջ համախմբած և անբողջ թիւրք ազգը ներկայացնող «միլլի ումերը» պարտաւորում են չաջակցել դաշնակից պետութիւններին ու չչարձակել ռուս խորհրդային կառավարեան վրայ Սրա փոխարէն «Ռուս խորհրդային հանրապետութեան կառավարութիւնն ընդունում ու վաւերացնում է օսմանեան կառավարութեան անկախութիւնն ու կատարելով գերիշխանութիւնը ղեկավարարի կնքման պահուն իր ունեցած սահմանով» և պարտաւորում է «իր բոլոր սիլթական ու բարդական ուժերով պաշտպանել օսմանեան գերիշխանութիւնը և հողային անբողջակամութիւնը»: Առանձին յաւելւածով որոշուում են «օգնութեան գործադրութեան եղանակին վերաբերող ղեկարական, տնտեսական և գիտական պայմանները»: Բաշէիկեանքը յանձն են տունում վաւերացնել «բոլոր խլամ ցեղերի անկախութիւնն ու ինքնավարութիւնը»; իսկ թիւրք ազգայնականները խոստանում են իրենց երկրում «գործադրել բոլոր այն հասարակական կարգերը, որոնք յայտարարուած և գործարուած են խորհրդային հանրապետութեան կողմից», պայմանով սակայն, որ այդ կարգերը չխանգարեն «խլամական հաստատութիւնների և սկզբունքների»: Միւնեւոյն ժամանակ «իր անկախութեան և շարժելու ապստոյնութեան տէր եղող օսմանեան ուժերի» ներկայացուցիչութիւնը պարտաւորում է վերադարձնել Բաշէիկեանքի բոլոր նրանց, որոնք «խորհրդային հանրապետութեան կառավարութեան կողմից պետութեան դաւաճանութեան ոճրով անբաստանելով՝ օսմանեան սահմաններից ներս են ապստանալ»: Դաշնագիրը կնքուած է մէկ տարի ժամանակով:

Դժբախտաբար, մեզ յայտնի չեն այս գաղտնի դաշնագրի յաւելւածական մասերը, որոնց մէջ նշանակուած են համաձայնութեան գործական պայմանները, բայց յետագայ ղեկավարն աչքի առաջ ունենալով՝ հշտու է հասկանալ նրանց ինչպիսի: Բաշէիկեանքը դրամական, ռազմական, օսման տեսակ տէլիսիական ու քաղաքական լայն աջակցութիւն սրջ տալին թիւրքերին կազմակերպելու «միլլի ումերը» և պատերազմ վարելու Պրանիպայիների դէմ Կիլիկիայում, Յունաստանի ու Հայաստանի դէմ Փժար չէ բժնունել նաև, որ առանց Բաշէիկեանքի օգնութեան քեմալականները երկար չէին կարող դիմանալ, և Թիւրքիան այսօր, իրք, կը լինէր ճաւաղած ու նիթարկուած Մեւրի դաշնագրի պայմաններին: Պարլին է եղակայցնել նոյնպէս, որ այդ պարագային միացեալ Հայաստանի ծրարներ կը դառնար իրական փաստ, և Հայ ժողովրդի գլխին թափուած յետագայ աղէտները սեղի չէին ունենայ:



1919 և 20 թվականները եղան բազմակողմանի և բազմաթիվ գործակցությունների մի ետևում շրջանը, թիւրք սպաների ու քարտեզները բազմակողմանի գեղակարգությունները ու նիւթական միջոցներով Հակասանկլիական պրոպագանդա էին ձգում իսլամ աշխարհում և կազմակերպում Հնդկաստանի, Արևելյանասիայի, Պարսկաստանի և այլ երկրների իսլամոթիւնը Անգլիայի դէմ: Միաժամանակ քեմալական գործակալները օգնում էին բազմակողմանի խորհրդայնացնելու իսլամական Վոլգայի, Արլ-բեշարի, Քիւրքեստանի և, առհասարակ, նախկին Ռուսաստանի ճահճետական երկրները: Իրենց կողմից բազմակողմանի թիւրք փաշաներին տրամադրում էին առատ ոսկի, դէնք ու ազդեանքներ, զինուորական Հազարատ, օթթօթեղ, Հեռախօսի և Հեռագրի մեքենաներ, ուղիւ ևայլ ևայլ:

Այս Համադրամակցության զուգընթաց, դեռ դաշնագրի մի ամեայ ժամանակաշրջանը չլրացած, 1920 թ. գարնանը Մոսկայի և Անգորայի միջև սկսուած են նոր բանակցութիւններ՝ «մշտական յարաբերութիւնների մէջ ճանելու» և «երկու երկրներին սպառնացող օտար ինպէտիպիզմի դէմ մղուող պայքարին ձանակցելու» նպատակով:

Մայիս ամսին Մոսկա և Հասնուձ թրքական մի պատվարութիւն, որ բերում է Մուսթաֆա Քէմալ փաշայից նամակ է ձգնում է բանակցութիւնների մէջ Ձիչէրինի Հետ Երբեք Հետևանք թալ բանակցութիւնների՝ Ձիչէրին ուղղում է մի գրութիւն՝ «Թիւրքիայի Ազգային Մեծ Ժողովի նախագահ Մուսթաֆա Քէմալ փաշային» («Պարսկա», 1920 թ. 9 Յունիսի): Համաձայն այդ գրութեան «խորհրդային կառավարութիւնը զոհուածութեանը ընդունում է Անգորայի Ազգային Մեծ Ժողովի զիտարութեան լուր գտնուող թրքական նոր կառավարութեան արտաքին քաղաքականութեան Հիմնական սկզբունքները, որոնք են. —

- 1. Թիւրքիայի անկախութեան յայտարարութիւնը.
- 2. Անվիճելիորէն թրքական Հողերի կցումը Թիւրքիային 1).
- 3. Արաբիայի և Սիւրիայի անկախութեան ճանաչումը.
- 4. Ազգային Մեծ Ժողովի կողմից ընդունուած վճիռը, ըստ որի Թրքահայաստանին, Գրդիստանին, Բաթումի շրջանին Արեւելեան Թրակիային և թրքա-արաբական բոլոր Հողերին է թողնուած իրենց ճակատագրի որոշումը: Ինքն ըստ ինքեան Հասկանալի է, որ այս երկրներում տեղի կունենալ ազատ Հանրապետ: մասնակցութեանը այն զաղթականների ու փախստականների, որոնք մի ժամանակ Հարկադրուած են եղել թողնել Հայրենիքը իրենց կամքից անկախ պատճառներով և որոնք պէտք է վերադառնան իրենց տեղերը»:

5, 6, 7 և 8 կէտերում խօսուած է ազգային փոքրամասնութեանց, նեղուցների, կապիտուլիզմիաների և օտար աղքատութեանց շրջանների փրկացման ճանին: Եւ, ի վերջոյ, առաջարկութիւն է արւում «անմիջապէս Հաստատելու դիւանագիտական և Հիւպատոսական յարաբերութիւններ»:

Մուսթաֆա Քէմալ փաշան պատասխանում է այս գրութեան և «ուրախութեամբ» ու «բերրիութեամբ» ընդունալ զնայով Ձիչէրինի առաջարկներին՝ յայտնում է միաժամանակ,

որ իրենք որոշած են եղել զբաղել Կարքը. Արլահանն ու Բաթումը, բայց «ձեր նամակի Հետևանքով մենք կը յետաձգենք այդ գործարկութիւնները» Այդ նամակից երևում է նաև, որ «Խորհրդ. Ռուսաստան մենք առտակաբար լիազօրութիւններով օժտուած մեր ներկայացուցիչները ճանապարհին են ... Երանք լիազօրուած են Հաստատելու քաղաքական կալուէ յարաբերութիւններ խորհրդային Հանրապետութեան Հետ... Սպասում ենք խորհրդային Հանրապետութեան լիազօր ներկայացուցիչների գալուն՝ միտախի անդամների Հետ միասին»: Նամակը լիք է զանազաններով ու պառօկացիւսներով «մեր Հարեւանների», այսինքն Հայերի դէմ:

Այս գանգատներն ու պրօպագանդաները Հետևանքներից պէտք է Համարել պատճառներից մէկը կարծիր բանակի յարձակումը Զանգեզուրի ու Նախիջեանի վրա և այլ շրջանների բռնի անջատումը Հայաստանից: Թիւրք փաշաների պնդումով բազմակողմանի գրաւեցին Եուզի-Պորիս-Նախիջեան խնդիրն՝ քեմալականների Հետ անմիջապէս միասնաբար նպատակով: Այդ խնդրիով թիւրքերը փոխադրեցին բազմակողմանից ստացած ոսկու մի մասը, ռազմամթերք, Բազում կողմակերպած թիւրք զորամասեր, զանազան պատվարութիւններ կային:

Թիւրք-բազմակողմանի բարեկամութիւնը առանձնապէս ջերմ ընդթ ստացաւ «Արեւելեան Ժողովուրդների Համադրում» 1920 թ. Ոգոստոսին, Բազում Այլ Համադրումներին, որ բացեց ու գործեց Ձիչէրինի նախագահութեամբ և ուր աչքի ընկնող դեր ունէր Թայաթի փաշայի բարեկամ Ռադէկը, մասնակցեցին և Էնվեր ու Թայիլ փաշաները և բազմաթիւ աչքի ընկնող թիւրք ազգայնական գործիչներ: Էնվեր փաշան, իբրև «պատգամաւոր Մորթըի, Այթըի, Թուհիսի, Թրիպոլիի, Եգիպտոսի, Արաբիայի ու Քիւբանտանի յեղափոխական կազմակերպութիւնների», ճառ կարդաց, որի մէջ ողջունում էր կօմունիստական վարդապետութիւնն ու Համաշխարհային յեղափոխութիւնը և կոչ էր անում իսլամ աշխարհին՝ սպասածընելու անգլիական աշխարհակալութեան դէմ: Այս Համադրումներում առանձնապէս պզգալի մեծերով երեւան եկաւ կօմունիստների և թիւրք ջարդարար փաշաների եղբայրութիւն ...

Մինչ Համադրումների մէջ արտասանուած էին ռազմա-շուժ ճառեր և սրերի ու զաշոյնների վրա երդում էր անում Մարիի չորս ճայրերից Հասարակ աղքատների բազմութիւնը \*), մինչ Բազուի գլխաւոր մզկիտ

\*) Ի դէպ, Արեւելեան Ժողովուրդների Համադրումների մասնակցող 1,891 պատգամաւորների մէջ կային և 157 Հայեր: Հայկական պատվարութիւնը երբորդ տեղին էր բռնում իր բարձրագոյնութեամբ, ամենից շատ Թիւրքերն էին՝ 235 պատգամաւոր, յետոյ Պարսիկները՝ 194, Ռուսներ՝ 104, Վրացիներ՝ 100 կարյն: Պատան, Միկոյան, Աւիս, Մուստեան, Կարինեան և միւս ճանր ու խոշոր Հայ կօմունիստները եղբայրակցած էնվեր ու Թայիլ փաշաների Հետ՝ անկողով լուծ էին «յեղափոխական» Էնվերի պօզրոմային ճառերը և Հանգիստ արտով դիտում, թէ ինչպէս թիւրք ջարդարարները նոր պատերազմ էին պատրաստում Հայաստանի դէմ:

1) Ձիչէրինը, որ ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի «Կարք, Արլահանն ու Բաթումընդունալ յայտարարուած են «անվիճելիորէն» թրքական Հողեր և, իբրև այդպիսի, փոխանցուած Թիւրքիային»:

թում իսլամական միտնդներ էին զուճարուճ մեծարելու և լսելու համար «խլամ աշխարհէ պարագուլս» ենվեր քաշալի համարմանովն արևելախոս ճառերը, վարագոյրի լետու, ճիւղքեան մէջ, Խալի փաշայի և Մուկայի ներկայացուցիչներէ միջև տեղի էին ունենում զարահի բանակցութիւններ զորճական անելիքների մասին: Բանակցութիւնների աւարկայ էին կազմում Ռուսական ու Մոսուլի ռազմաճակատները և քէճակակների ծրարները ընդէմ Հայաստանի: Բազմաթիւ վկայութիւններ կան, որոնք հիմք են տալիս եզրակացնելու, որ երբ, համազումարից յետոյ, Խալի փաշան, Շուշի-Նախիջեան ճանապարհով, մեկնեց Քիւրքիս՝ ռուսական սակով քնռնաւորած աւսոփոխելով, պատերազմը Հայաստանի դէմ արդէն նախորոշած էր: Այս հարցի լուսարանութիւնը, սակայն, ներկայ յօրածոի նիւթը չէ կազմում, այդ պատճառով կը բաւականանք միայն ընդհանուր դիտողութեամբ՝ ուրիշ անգամայն կամ ուրիշ տեղի վերապահելով մանրամասնութիւններ տալը:

Բանակցութիւններն ու զորճակցութիւնը բոյշելիների և քէճակակների միջև յանգում են նուև դիւանագիտական փոխազդած ճանաչման ու համաձայնութեան: 1920-ի ամառը բոյշելիները Քիւրքիս են ուղարկում բազմամարդ ճի պատուիրակութիւն՝ Ալուսայի զինուորականներ և Անգուրայում հաստատու ելուստարութիւն, դեպատնաուուճ Քէճուրականերն են Մոսկուայում ստեղծում են պատուիրակութիւն, իսկ 1921-ի սկզբից հիմնում են դեպատնաութիւն, իրեն դեպատն ուղարկելով միլի շարժման անհնակարկաուն դէմերից մեկին՝ Փուսղ փաշային: Նոյն 1921 թ. Մարտին Մուկա և հասնում՝ մի լեւազար Իւսուճ Քէճուլ բէլի զինուորականներ են Մարտի 16-ին ստորագրում և զաշնագիր Ռուսաստանի և Քիւրքիսի միջև: Սա աւաջին բաց և պաշտօնապէս հրատարակութեան տրւած զաշնագիրն է թիւրքերի և բոյշելիների միջև: Մինչև այդ լուգած բուր բանակցութեանց արդիւնքները և կիրւած զաշնագրերը պահել են խիստ գողանի և այսօր էլ շարունակում են մնալ ճամուկ արտաքին զորճակարութեան պահանջներում:

(1921 թ. Մարտի 16-ի զաշնագիրը, որ ստորագրւած է Ֆիշերինի ու Կորքնասովի և Իւսուճ Քէճու բէլի, Ռիզուու բէլի և Ալի Փուսղ փաշայի կողմից, մեղ համար, մանաւորապէս, խիստ կորեւուր փաստաթուղթ է, այդ պատճառով նրա բովանդակութիւնը կը ասոք աւելի մանրամասնորէն.

«Յօդ. I. Դաշնագրի կողմերից իւրաքանչիւրը համաձայնում է չճանաչել ոչ մի հաշտութեան զաշնագրի կամ ուրիշ որ և միջազգային սկստ, որը ընդունելու պարտաւորւած լինի միւս զաշնագրի կողմէ: Ռուսաստանի Խորհրդ. Դաշն. Սօց. Հանրապետութեան կառավարութիւնը՝ ամաձայնում է չճանաչել ոչ մի միջազգային սկստ, որ վերաբերւած է Քիւրքիսային և որ ճանաչւած չէ Ազգային Մեծ Ժողովից ներկայացուլ Քիւրքիսի ազգային կառավարութեան կողմից:

Քիւրքիս ստիւլ ներկայ զաշնագրի մէջ հատկացում են այն հարաձայնները, որոնք մայրած են 1336 (1921 թ.)

Յունար 21-ի Քիւրքիսի Ազգային Ուխտի մէջ՝ ճշակւած ու յայտարարած Օսմանեան Ազգային Միապիտանական Ժողովի կողմից Պօլսում և հարկարւած մանուլին և բարբ պետութիւններին:

Քիւրքիսի հիւսիս-արեւելեան սահմանը որոշում է հետեւեալ գծով, որը՝ սկսելով Սև ծովի եղիբից պանուղ Սարի գիւղի մաս՝ անցնում է Խէղիս-Մթա լեռան վրայով, Շալէթարի Գաննի Դաղի ջրոտաշինի գծով, ապա ընթանում է Արզահան ու Գարս սանջակներէ հիւսիսային վարչական սահմանով — Արիտույ Արաքս գետերի միջին գծով մինչև Ստորին Քարա-ուր բերանը (սահմանի մանրամասն նկարագրութիւնը և նրան վերաբերող հարցերը որոշւած են աւաջին յաւելումում (A) և (B) և կցւած ցարտեսում՝ ստորագրւած երկու զաշնագրի կողմերից:

«Յօդ. II. Քիւրքիսի համաձայնում է զիջել Վրաստանին վեհապետական իրաւունքները նաւահանգստի, Բաթում քաղաքի և այն զաշնագրի I կէտում ճասնանշւած սահմանից դեպի հիւսիս գտնուող և Բաթումի շրջանի մէկ մասը կազմող հողամասի վրա՝ պայմանով, որ.

1) Սոյն յօրածով մասնանշւած հողամասի ազգաբնակութիւնը լայնէ տեղական լայն ինքնապարութիւն վարչական տեսակէտից, որը կառուցովէ անէն մի համայնքի իր ճշակութային և կրճակական իրաւունքները, և որ ազգաբնակութեան ընճաչի հնարաւորութիւն հաստատելու իր բաղճանքներին համապատասխանող հողային որէնք:

2) Քիւրքիսի սուրի սպաս թրանզիտի իրաւունք Բաթում նաւահանգիստով, աւանց մաքրի, աւանց կանգնեցնելու և աւանց որ և սուրք դիւուր անէն անսակ ապրանքներ Քիւրքիս մացնելու և որսը հանելու՝ ստով Քիւրքիսի իրաւունք՝ օգուտելու Բաթումի նաւահանգստից՝ աւանց յատուկ տուրք վճարելու:

«Յօդ. III. Երկու զաշնագրի կողմերը համաձայն են, որ Նախիջեանի շրջանը՝ սոյն զաշնագրի աւաջին յաւելումում (B) մասնանշւած սահմաններուն՝ կը կազմէ մի ինքնապար հողամաս Արբըշանի հովանաւորութեան տակ՝ պայմանով, որ Արբըշանը չի՝ զիջի այս հովանաւորութիւնը որ և երբորդ պետութեան:

Նախիջեանի շրջանի եւանկիւնի կազմող այդ գօտում, որ պարփակւած է Արաքսի միջին գծի, Դահու սարի (3829) — Աէլի Դաղի (4121) — Բաղարդիկի (6587) — Քէօմուր-Ռաղի (6930) գծի միջև, այդ հողամասի ստճանապիծը, որ սկսում է Քէճուր-Դաղից (6930), անցնում է Սէրայ Բուլակ (8071) սարով — Արարատ կայարանը և վերջանում է Քարա-Սու գետի Արաքսի միացման կէտում, կազդէ Քիւրքիսի, Արբըշանի և Հայաստանի պատուիրակներից կազմւած մի յանձնաճարովի կողմից»:

Չորրորդ յօրածով «հանդիւսարապէս» ընդունում է արեւելեան ժողովուրդների «ազատութեան ու անկախութեան», ինչպէս նաև «իրեն իրաւունքներին համապատասխանող վարճաճև ընտրելու բարձունքը»: Հինգերորդ յօրածու վերաբերում է նեզուցնելին, որի ճատապիւրը կուրշի Սև ծովի եղիբին գտնուող երկրների պատգամաւորների խորհրդածովում, որը պէտք է յարգէ Քիւրքիսի վեհապետութիւնն ու ապահովութիւնը: Երկ կէտով չեղեալ են նկատ-

ունձ երկու երկրները միջև ցարդ կնքուած բոլոր դաշնագրերը, որոնք այլևս չեն համապատասխանում նրանց շահերին: Ռուսաստանի կառավարութիւնը յայտարարուած է, որ զետ համարուած է Քիւրքէիսն ազատ գրամական և այլ կարգի պարտաւորութիւններէն, որոնք Հիմուած են Քիւրքէիսն և ցարահան կառավարութեան միջև կնքուած միջադատչական տկտերի վրա: 7-րդ յօդուածով վերացուած են կապիտուլացիաները: 8-րդ կէտը պարտաւորութիւն է դնուած կողմերի վրա «Քոչլ չտալ, որ նրանց հողերի վրա կազմեն կամ գորութիւն ունենան կազմակերպութիւններ կամ խմբեր, որոնք յաւակնութիւն ունին ներկայանալու միւս կողմի կամ նրա հողի մի ծախ կառավարութիւնը, ինչպէս նաև գոյութիւնը խմբերի, որ նպատակ ունին կազմուելու միւս պետութեան դէմ: Ռուսաստանն ու Քիւրքէիսն նման պարտաւորութիւններ են ստանձնուած նաև Կովկասի խորհրդային հասարակութիւններին նկատմամբ՝ փոխադարձութեան պայմանով:

«Համարուած է հաստատուած, որ սոյն յօդուածու յիշատակուած թրքական հող ստեղծվ հասկացուած է այն հողածառը, որ պոսուած է Քիւրքէիսն Աղ: Մեծ Ժողովի կառավարութեան զինուորական ու քաղաքացիական անմիջական կառավարչութեան ներքոյ»: Մնացած յօդուածները (9—16) վերաբերուած են, համեմատաբար, երկրորդական խնդիրներին, հարցարկացութեան միջոցներին, պատերազմական զեղիներին, հիւպատոսական պայմանագրերի կային: 11-րդ յօդուածով երկու կողմերը յանձն են աւուած միմեանց քաղաքացիների վերաբերմամբ կիրառել «անմեկ աւելի նպատարաման սիզընը»: 15-րդ յօդուածով Ռուսաստանը պարտաւորուած է ձեռք աւելի միջոցներ, որ Անդրկովկասեան հանրապետութիւններին էլ նրաւունն սոյն դաշնագրի իրենց վերաբերող կէտերը Քիւրքէիսն հետ կիցից դաշնագրերի մէջ: Վերջին, 16-րդ կէտով վաւերացուած դաշնագրի փոխանակութեան վայր նշանակուած է Կարսը:

Նոյն տարւոյ Հուլիս, 21-ին, Կարսուած, սոյն դաշնագիրը անշան յապատուեցնելով ու չինն յաւելուցնելով հաստատուեց նաև կովկասեան հանրապետութեանց ներկայացուցիչներին կողմից: Ըստ ձեռի սա նոր, ուրոյն դաշնագիր էր, ըստ էութեան Մոսկուայի դաշնագրի վերախմբագրուած հրատարակութիւնը:

Մոսկուայի դաշնագիրը ձայնաւորապէս ծանր փորձութեան ենթարկեց Լոզանուած, երբ Քիւրքէիսն նեղուցներին վերաբերմամբ ընդունցին այնպիսի մի որոթիւն, որը բացառապէս իսկուած էր Մարտի 16-ի դաշնագրի 5-րդ յօդուածը: Այս հանգամանքը որոշ պողութիւն առաջացրեց Մոսկուայի և Մեքսիկոյի միջև Վերջինս յայտնաբերուելու իր առկա բոլոր յիշուած պրոպագանդային և փորձեր էր անուած ընդհանուր, իզու գտնիլու արեւելքի հետ: Քէմալի վախը այնքան էլ անհիմն չէր. նա տեսնուած էր պարզ, որ բոլոր լիկիները յամաբարէն ձյուած են Քիւրքէիսն էլ ենթարկելու խորհրդայնացման: Քէմալն ու իր գործակիցները չէին կարող չհասկանալ, որ խորհրդայնացումը պիտի նշանակէր ոչ այլ ինչ, եթէ ոչ Քիւրքէիսն Խորհրդային Հանրապետութիւնների Միութեան, այսինքն՝ Ռուսաստանի սահմանների մէջ մոցեցիլ Սաւայն, միւս կողմից չէր վերանուած ո՛չ պա-

կատ սպաւանական վտանգը Անդրլայի, իսկ վերջերս նաև Խոտլայի կողմից: Մոսկուայի խնդրի մասին Ազգերի Լիգայի հանած վճիռը հանդիսացաւ այն մղիչ ոյժը, որը Քիւրքէիսնի դուրս բերեց մատառնուութեան շրջանից. ընտրելու տեղ չէր թաղել, և Քէմալը ընդառաջ դնաց այն առաջարկներին, որ վաղուց արդէն անուած էր Մոսկուան. կնքել նոր դաշնագր, որ գարգացներ նախկին դութիւնը և Քիւրքէիսնը: խորհրդային գործակցութեան տար աւելի վճառական բնոյթ: Այդ կարեւոր էր Մոսկուայի համար ո՛չ միայն անմիջապէս Քիւրքէիսնի նկատմամբ ունեցած իր հաշիւներին պատճառով, այլ առաւել կերպով իրեն հակակշիւտ ընդդէմ Ազգերի Լիգայի և, ընդհանրապէս, արեւմտեան պետութիւններին: Լոբարտի դաշնագրով և, մանաւանդ, եթէ Գերմանիան մտնի Ազգերի Լիգայի մէջ, Խորհրդային Միութեան առնձնացուած էլ աւելի սուր բնուածութիւն կատանոյ: Քիւրքէիսնը խորհրդային նոր դաշնագրի, բոլորի կիւսնազեւոնների կարծիքով կը հանդիսանայ այն ոյժը, որը դէպի իրեն կը գրաւէ բովանդակ արեւելքը և, ի մասնաւորի, մահմադական ժողովուրդները: Արեւմտեան Ազգերի Լիգայի դէմ Արեւելոն Ազգերի Լիգա-հաս Չիչէրիլին այս մտայնացման իսկական նպատակը: Այդ ցոյց է տալիս Փարիզի դաշնագրի, որ կործնատարաբար պատական խնդր փաստաթուղթի սպաւորութիւն է թողնուած, բայց իր յետեւ ունի խոշոր ակնկալութիւններ:

Այդ դաշնագրի պաշտոնապէս հրատարակութեան արուած ամփոփումը հետեւեալն է.

«1. Ի դէպ զինուած գործողութեան ընդդէմ դաշնագրի կողմերը մէկի կամ մէկից աւելի ուրիշ պետութիւններին կողմից, դաշնագրի միւս կողմը յանձն է աւուած պահել չէզոքութիւն առաջին կողմի նկատմամբ:

Ասել է «ազգամիջեան թիւրքիմացութիւն» կայ ինչո՞հրային միութեան սահմաններում, և Ելիաւան ինքը Հաստատում է, որ, Արցն իսկ կօմունիստների մէջ, կենդանի է ազգային սահմանների Հաստատման և ազգային լիզի գործածութեան պահանջը: Եւ, յիշուի, երբ ասելի ծօրից էք ծանօթանում Հարցին, տեսնում էք, որ ազգային փոխարկութիւններն ու այլմերթ ձգտութիւնը Կովկասում անելիքն ևնչ ինչդանի են ու Հրատար: Այս փաստը առանձնապէս սուր կերպով երեւան եկաւ վերջին կոմունիստական Համագումարներում: Փարձենք թափանցիլ խորրի էութեան մէջ Հենց բոլշեւիկիան տեսլիների Հիման վրա:

Ինկանթերի 1-ին Վրաստանի Կոմկուսի Համագումարի երկրորդ նիստում, Վրասա. Կոմկուսի քարտուղար ընկ. Միխ. Կախիանին զեկուցում է տալիս Վրաստանի Կենտկոմի գործունէութեան մասին: Եւ ահա թէ ինչ ենք կարում պաշտօնական օրացում Հրատարում արձանագրութեան մէջ. \*) «Միութեան ընկերը յիշատակում է Աջարիստանի բոլորին յայտնի ճիւղ դեպիւր և Աբխազիայի ցանկութիւնը անմիջապէս մտնել Անդրկովկասի Ֆէդերացիայի մէջ: Աջարիստանի դէպքն արդէն վերացւած է, ինչ վերաբերում է Աբխազիային՝ աբխազացի ընկերներն էլ Համոզեցին իրենց սխալ մէջ»:

Այդ ինչ «ա՜հա՛մ դէպք» է, որ պատահել է Աջարիստան և որ «մենքն է յայտնի»: Մենք, գտնէ՛ առաջին անգամն ենք Հանդիպում բոլշեւիկեան թիւրքերում յիշատակութիւն այդ մասին: Ի՞նչպէս է ծագել այդ դէպքը, ի՞նչ արտայայտութիւն ու փոխան և անկեցիլ — Համագումարի արձանագրութիւնը խճոճութեամբ լուրթեան է տալիս նաև՝ այդ ի՛նչ «ցանկութիւն» է, որ արտայայտել են աբխազները, ի՛նչպէս է արտայայտել այդ ցանկութիւնը և գործնական ինչ լուծում է ասացիլ-նոյնպէս պահւում և ծածուկ: Մի բան պարզ է, սակայն, որ Աջարիստան ու Աբխազիստան, ինչ որ «Թիւրքիմացութիւն» է պատահել: Այդ «Թիւրքիմացութեան» մասին, ըստ էութեան, բոլշեւիկները՝ ոչինչ չեն ասում, և մենք ուրիշ աղբիւրներից միայն իմանում ենք, որ թէ Աբխազները, թէ Աջարիստան ժողովուրդը Հենց աեպական կոմունիստների ղեկավարութեան տակ ըմբատացել է խորհրդային Վրաստանի կառավարութեան դէմ, պահանջ դրել դուրս գալու Վրաստանի սահմաններից և,

\*) Այս և յետագայ կարծիքը ասնւած են Թիֆլիսի «Մարտակոչ» թերթի 1925 թ. Ինկու. 3, 4, 5 և 9-ի Համարներից: Ընդգծումները մերն են:

իրև ինքնուրոյն Հանրապետութիւն, ճանկու Սնդրկով-կասեան Գաշնակցութեան մէջ: Այս ընթացաւորութիւնը ահագին իրարանցում են առաջ բերել կենտրոնում. Օրջոնիկիձէն և Վրաստանի Կոմկուզ Համապատասխան Տիրջոնի են ձեռք առել և մի առժամանակ կարողացել են «կարգը վերականգնել»: Այն աս է, որ կոմունիստական ժողովուրդ կուռում է «Յուրիմացութիւն» ու «ահա՛ն ղեպ»:

Գիտնք առաջ, Վրաստանի Կոմկուզի 4-րդ Համագումարի Գիկա, 2-ի առաւօտուայ ու երկույի նիստերը ներկայումս են կախարհու զեկուցման քննադատութեան: Եւ «Հանդէս» կէտը ընկերները առանձնապէս կանգ են առնում Աջարխանի ղեպները ու Աբխազիայի ցանկութիւնները որոշ: Իրանաշուում են այն սխալները կամ պակասները, որոնք գործին ապօրինակ ընթացք տւին: Ինչ օրինակ — դարձեալ չի առնում Աջարխանի պատգամաւոր Շուշանեան «չեշտում է, որ աջարական քծուրը նորնորմ վասնզաւոր է, որքան առաւելան ու վրացականը: Այնպիսով սպալուին Հարցին՝ նա զանում է, որ սեղերում պէտք է աշխատել մէջ առաջ քաշել տեղական աշխատողներին՝ խուսափելով դրոյից որ եւ պատգամական ափսասաւոր նոտանա կելուց»:

Մի քիչ աւելի է լուսարմում ինչպէր Օրջոնիկիձէն, որ երկարորէն կանգ է առնում Աջարխանի և Աբխազիայի ղեպերի վրա, սակայն, նոյնպէս առանց այդ ղեպերի ետքինը ներկայացնելու: Նա առում է. «Համարեա բոլոր ընկերները շօշափեցին ազգային ինչպէր: Բոլոր ճառերը Աջարխանի, Աբխազիայի մասին էին. այդ ճառերից հրեւում էր, թէ ով ինչպէս է Հասկանում ազգային ինչպէր մեզանում»:

Ինչ է պատճառը բոլոր այս ճառերի ու խօսակցութիւնների Ո՛վ է մեղաւորը: Մեղաւոր են երկու կողմերն էր Մակայն, թոյլ աւելք ինձ մեղքի մեծ ճառը ղնելու աւելի վրացի ընկերների վրին, քան ոչ-վրացիների, որովհետեւ վրացական այլը Վրաստանում տիրողն է: Վրացիները վերաբերմունքից ու վարքից կախում է զխուսարպէս և ոչ-վրացիների վերաբերմունքը ղեպէ մեզ: Եթէ զուգ կուսկանում էք այդ բանում, ապա, որքան, յիշեցէք մեր վերաբերմունքը ղեպի նուստատմը:

Ազգային փոխարարբերութիւնների մացքը հասնելուսանում է ահնանհասապ խնդիրը: Ազգային Հիւանդոտ յարարբերութիւնները մենք ժառանգութիւն ենք ստացել ցարական ուէթմից:

«... Ինչ էր կատարում Ախալպլակում: Այնտեղ ամբողջ անբաւականութիւնը հետեւում էր (ուր հողաչափների անկանգն վարձուցի), որոնք չէին կատարում մեր Հրահանգները, այլ շարտիակում էին իրենց քաղաքականութիւնը: Ձե՛ք որ նրանք վրացական սպիկ պաշտպաններ էին, իսկ Կոմունիստական կուսակցութիւնը՝ դաւաճան»:

« Ինչպէ՛ն առաջ եկաւ Աջարխանի ղեպը: Ինչո՞ւ տեղի ունեցաւ նա և ինչո՞ւ այդ իրարիմացութիւնը տեղի ունեցաւ Աջարխանում, որ խորհրդային իշխանութիւնը որի է աւելի, քան մի որ և է տեղում: Ձե՛ք օր խորհրդա-

լին իշխանութիւնը այնտեղ շինել է կարողացնել, դրարոցներ, նաւապարհներ եւայլն»:

Առնենք կուսուր-կրթական աշխատակը, այստեղ էլ խորհրդային իշխանութիւնը որի է Հսկայական գործ: Աջարխանում մինչև խորհրդայնացում կար ճ գործը, իսկ այսօր՝ 116: Վրաստանի ո՛չ մի անկիւնում, ինքնավար ոչ մի ուրիշ հանրապետութեան համար չի առւած այնքան, որքան առւած է Աջարխանի համար, բայց և այնպէս մենք Հանդիպեցինք այնտեղ մի շատ ահագին երեսփոխ:

«Ո՛վ է մեղաւորը: Մեղաւորը, զխուսարպէս, մեր Բաթումի ընկերներն են Ինչպէ՛ն եղաւ, որ Բաթումի կազմակերպութիւնները կորուցին ժողովրդից, Հեռացան նրանից: Այդ առաջ եկաւ նրանից, որ մեր Բաթումի վրացի եւ առաւ ընկերները ապա մոտավորին իրաւաւաւստային համարում: Նրանք ցանկանում էին Հրամայելի աջարցիներին և նայում էին նրանց վրա վերինը: Ձեզ Հարցնում են՝ եկե՛ք և զիւր Բաթումի ընկերները որ և է մեկը, երեւացել է նա զիւրացուն և աւել է նրան, թէ այս ճանապարհները, կամորջները, պրացիները շինում է Կոմունիստական Կուսակցութիւնը: Ո՛չ, այդ բանը տեղի չի ունեցել Բաթումի բանակները, որոնք մեծ մասամբ վրացիներ են, մեծ ճանակցութիւն են ցայտալիս Գուրխալի, Իմէրէթիայի կուսուրական մեծաւորութիւններին: Երբ շինում էր Օզգրգեթի երկաթուղին, նրանք դրան Հուսուցեցին այդ գործի Հոտար Սա, Ի Հարկէ, լաւ գործ է լայց ի՞նչ են արել այդ բանարները, որպէսզի, թէկուզ մի որ և է զիւրում մի խրճիթ-ընթեցարան բանային — ոչինչ: Սա մեր Բաթումի ընկերներին սխալն է, որի Հոտարն. նրանք կարեւորին Աջարխանի զիւրացուց: Մի՞թէ սա է բանարի և զիւրացուն լինիական միացումը»:

«Ճառը մի յանձնատուով զնոց Աբխազիա և Հեռագոտեց ամբողջ երկիրը: Ո՛չ ոք չի առում, թէ այնտեղ ամեն ինչ լաւ է: Աբխազները զեքերը մեծներին կուռում էին մեծնէկիզմի ղե՛մ՝ լանկին որոնց նրանք տեսնում էին վրացիներին: Այնտեղ կուրը մեծնէկիզմի ղե՛մ նայնում էր կուրին վրացիներին ղե՛մ, և մենք տեսնում ենք, որ խորհրդայնացում Աբխազիան ղե՛մ է ստանալուսում վրաստանին ու վրացիներին. ընկ. Իմբան պատգամում էր Աբխազիայի անկախութեան տեսնելու: Նա Հուսուցանում էր, թէ Աբխազ ժողովուրդը չի ուզում մեզ վրաստանի կազմի մեզ: Աբխազացում զիւրութիւնը շատ բարդ է. Հողի մի փոքրիկ կտարի վրա մի տասնեակ ու կէս աղաւթիւններ են ապրում: Այս բոլորը պէտք է Հաշու առնենք: Ինչ է Աբխազիայի իրականութեան անորմաւորութիւնների զխուսարպէսում: Ըստ իս, Հիմքում գտնում են նայն պատճառները, ինչ որ և Աջարխանում — մեր ազգային քաղաքականութեան Հնաւորացում մեր վրացի և ոռա ընկերների կողմից»:

Շատ բնորոշ է Օրջոնիկիձէի աւած բացատրութիւնը Ախալպլակի ղեպերի մասին: Իստար և զարն, որ ամէն բանի պատասխանատուն «Հոգաչափն» է — այդ տեղիտան, շուէն Հոգաչափը, իսկ կոմունիստներն ու խորհրդային իշխանութիւնը բնաւ մեզ չունին: Են ինչ, իրականութիւնը բողոքողին Հսկառակի է: Նոր չէ, որ Ախալպլակի Հայ

գիւղացիութիւնը զգոհճում ու յուզուած է վրաց տիրապետութեան դէմ. նա Հակառակ էր մէնշեիկի Վրաստանի էլիտա-նութեան, Հակառակ էր խորհրդային Վրաստանի էլիտա-նութեան, որի Հաստատած աւժիմը ոչինչով չի տարբերուած նախկին ազգայնական աւժիմից: Եւ այս տրամադրութեան արտայայտութիւնն է — ոչ «Հողաշափ»-ի, որ Ախալքալաքցիք ընթատացի են նաև բոլշեիկիները դէմ Գաղտնիք չէ, որ ամբողջ Ախալքալաքի ներկայացուցիչները՝ ծոռ 50 Հոգի՝ գնացել են Քիթլիս՝ պահանջելու, որ Ախալքալաքը կցի Հայաստանին՝ Հակառակ դէպքում սպառնալով զնալ Մոսկուա՝ Ռիխովի ծոռ, և զանգատել վրացի կոմունիստներին բռնապետութեան դէմ: Յայտնի է նաև, թէ Քիթլիսում ի՞նչ կրթանցուած է առաջ բերել այս պատգամաւորութեան երևալը և թէ ինչպէս շէֆերը ձեռ ու ոտ են ընկել «խալքալաքիութիւնը» ծածկելու Համար:

Սուկոյն, որքան և ձածկելու լինեն, փաստը կը Քուլ փաստ, և ո՛չ մի ճարտասանական ձև չի կարող ճարդկանց խաբել: Անհրեքելի իրականութիւնը այն է, որ Ախալքալաքի Հայ գիւղացիութիւնը զգոհ է վրաց ազգայնական էլիտա-նութիւնից, աշարացիները ծառանում են ուրև և վրացի ազգայնական կոմունիստներին դիմ, արխանները թշնամաբար են արամազրած դէպի վրացիները և ճգում են անկախութեան: Ի՞նչպէս է բացատրուած այս երևոյթը Անդրկովկասի «փոխարքան» և Բ՛նչ էր և նախատեսուած: Օրջօնիկիձէի կարծիքով Ախալքալաքի անբաւականութեան աղբիւրը «Հողաշափներն» են, Աշարիայի անդորրութիւնը խանգարել է այն պատճառով, որ աշարացիները չեն իմացել, որ Գոմկուռն է շինել իրենց կոմունիստներն ու զարոցները, իսկ Արխալքալաքը էլ վրաց կոմունիստներին անկախական կերտերումն է պատճառ, որ «բարեաց ժողովուրդը չի ուզում Քուլ Վրաստանի կողմի ճեշը»: Լեռացրէք Ախալքալաքից «Հողաշափին», Հասկացրէք աշարացուն Գոմկուռի շինարարութիւնը, աւելի փափուկ վարուեցէք արխանների հետ — և բոլոր դժարութիւնները կը Հարթվին Ուրջան և պարզ ու Հեշտ իրագործելի լինի քաղաքական այս իմաստութիւնը, բայց Հարկ թէ կարելի լինի Համարել նրան միջոց ազգային կիճուի լուծման Պատճառները շատ աւելի խոր են և կըըը անհամեմատ աւելի դժար՝ քան Օրջօնիկիձէն է երևակայուած:

Եւ որ այդ այդպէս է, քոյց է տալիս և այն Հանգաւանը, որ հարցը Վրաստանի Գոմկուռի Համագումարում չի փակուած և տարւում է նաև Գոմկուռի անդրկովկասեան Հո-ճակուածը: Այստեղ նորից ազգային հարցը գումուն է բուռն վիճարանութեան առարկայ, և ճեշ անդ է գալիս նաև «Աղբեջանի լուռային ծոսի», այսինքն՝ Գարաբաղի ու Հայկական Փոռնակի Հարցը: Եւ Օրջօնիկիձէն մի անգամ էլ ստիպուած է լինում խօսք առնել և բացատրութիւններ տալ՝ ապի բոլոր թիրփծացութիւնների մասին, որոնք տեղի են աւնենում Արխալքալաքում, Աշարիայում, Ախալքալաքում ևն: «Աղբեջանի լուռային ծոսի հարցը դուրս է բերել և ուղարկել Աղբեջանի կենտրոնական կոմիտէին Հէնց Անդրկովկասի Երկաթային Գոմիտէի՝ մասնամեջով, քե պիտ է ամել այն եւ այն»: Երկրային Գոմիտէն զբաղւել է և մայականների խնդրով և որոշ կարգադրութիւններ է արել Վրաստանի, Հայաստանի և Աղբեջանի կառավարութիւններին, որոնց զմէ զանգատել և մայականները:

Այդ աննից պարզ Հետեւում է, որ այսօր, խորհրդային իշխանութեան տակ էլ, սուր կերպով դրած են ազգային բոլոր այն հարցերը, որոնք մշտապէս զգոհութեանց ու պայքարի աղբիւր էին երէկ. արխալական հարց, աշարական խնդիր, Ախալքալաքի, լուռային Փոռնակի ու Գարաբաղի վէճ, մայկաններին անբաւականութիւն — չէ որ դրանք Հէնց նոյն հարցերն են, որոնք կային և «պաշինակ» ու «մէնշեիկի»-ներին օրով և դեռ աւելի առաջ, ցարի ժամանակ: Եւ հարցերի բնոյթը, և՛ արտայայտութեան եղանակը, և՛ շահագրգռուած կողմերի վերաբերումը — առաւայտուէն միևնոյնն են, սակէն ինչ, վերջէ վերջօջ, պտտում է ազգային ինքնորոշման իրաւունքը յարգելու շուրջը. Գ՛նշան արխալաքիները, աշարացիները, ախալքալաքիցիներն ու գոմիտէիցիները ընթատանում են տիրող վրացի ու թիւրք կոմունիստների դէմ և պահանջում են յարգանք գեպի իրենց տարրական իրաւունքները, ինչպէս երէկ ընթատանում էին մէնշեիկիներին և մուսուլմանականներին դէմ:

Եւ ոչին էլ նոյնն է: Օրջօնիկիձէն վկայում է, թէ «եթէ Աղբեջանում այս կամ այն Հայը կատարել է որևէ խայտառակութիւն և Աղբեջանի կառավարութիւնը նրան բանտ նստեցրել — նա ամէն կերպ կաշխատի սպացոսցանել, թէ այդ բանն աղբեջանցին անուս է Հայի վերաբերմամբ: Եթէ Հայը պատմի մի Հայի, նա չի տա. թէ Հայն այդ բանն արտւ այս ու այն պատճառով: Բայց եթէ Հայը բոլորովին արգարացի կերպով պատմէ մի թիւրքի, անպատճառ այդ բանին կը կասեն Հայ-թրքական յարաբերութիւնների պէջը և ընդհակառակը»:

Որով պատկերը դառնում է բազ մանային կատարեալ Պակաս էր «Հայ-թրքական յարաբերութիւնների պէջը», Օրջօնիկիձէն այդ էլ ներկայացրեց ճի՛շդ և ճի՛շդ ցարի իշխանութեան պէս: Ազգային կրքերը Գովկասում ո՛չ միայն չեն մեռած, այլ աւելի ևս սրած և ու տարածիք են գործած: Դրան մեծապէս նպաստում է և այն Հանգամանքը, որ բոլշեիկիներին Հրապարակ դրած մարաշի նշանաբանները աննեպաղան կերպով խեղդում են, երբ Հերթը գալիս է իրագործման: Բոլշեիկեան խօսքը ստում է «ազգային ինքնորոշում միևնու անկախութիւն», իսկ երբ Արխալաքն գնում է Վրաստանի կողմից դուրս գալու պահանջ, առաջ է անցնում Ձեկան և արխաններին բանի ուժով պահում վրաց տիրակալութեան տակ: Խօսքով ստում է, թէ վիճելի Հողամտերի ճակատագիրը պէտք է կորացուի մոզովագրական հանրաքէլի միջոցով, բայց երբ Ախալքալաքի գիւղացիութիւնը բուռն թափով պահանջում է իրեն միացնել Հայաստանին, նոյն Ձեկան ստիպում է լսել ու Հնադանդի վրաց ազգային ճրագիրները առաջ ըջող կոմունիստներին: Խօսքի ու գործի այս ազգապիղ Հակառակութիւնը այնքան ցայտուն է, որ պարճալից չեն բնու այն ներքին խմորումներն ու շարժումները, որոնք միմեանց յետեւից կամ մի-ժամանակ տեղի են ունենում: Սուխումից սկսած մինչև Փոռնակ ու Եուշի՝ խորհրդային ամբողջ տրամաութեան կրա:

Մասամբ Հէնց բոլշեիկիներին խուճանավար պրօպագանդի աղբեցութեան տակ ազգային դպրասէները շատ են սրել Գովկասում: Այն մոզովուրդները, որոնք երէկ տարրական ինքնավարութեան մասին իսկ չէին Համարձակուած երա-



զիչ այսօր այլևս չեն բուսականաժողով ամենալայն ինքնօրինու-  
թեամբ և պահանջում են կատարել անկախություն և  
ինչո՞վ են ուզում յոնպիսի բոլշևիկները ազգային այդ  
ճակիմովիլը: Օրջոնիկիձէն միամտութիւն կարծում է, որ  
ի՞թէ մի քանի կամուրջ ու դպրոց շինեն, ճանապարհներ և  
ուսուցիչ անկողններ, ամենքին զոհարում ասած կը վնեն  
ճիշդ այնպէս, ինչպէս Հայ կոմունիստները մի քանի քառուկ  
ու բրմբիկօղորդարարով յուճուած են Համարում Հայկական  
Հարցը: Երանք չեն ուզում Հասկանալ, որ նրաձական բա-  
րեցնելից գտա կան և Հոգեւոր Հարստութիւններ և որ այս  
վերջինները, յաճախ, շատ աւելի բարձր արժէն: Ասան ու  
կանուրը, ի Հարկէ լաւ և անՀրճած ին, բայց ինքնին  
ոչինչ են, ի՞թէ նրանցից օգտուող դատապարտած է սուրբ-  
կարուն կենսել: Ազգային ազատութիւնը անկեղծ առաջ են-  
թաղում է անՀայտ ազատութիւն, քողարացու և Հասա-  
րակութեան անգամի պատուութիւն: Ասանց իլլճի, մաքի,  
Համոզմաներ ու անՀասանալի նախաձեռնութեան ազատու-  
թեան չկայ ո՞չ մի ազատութիւն, գոյութիւն չունի, Հանուա-  
բար և ազգային ազատութիւն: Համաշխարհային բանտում  
աշգրն էլ բանտարկելով են՝ անՀասանելի դէտ: Եւ, առուալն,  
ճիմպիլի են այն միանալ ինքնաբերականութեանը, թէ՛ «Թոյ-  
Հրոյային Միութեան մէջ չկայ և ո՞չ մի ազգամիջեան թիւ-  
րեմայութիւն»: Թորհրդային Միութիւնը ինքը Հենց թիւրի-  
մայութիւն է...

**ԹՈՒՐԻԿՈՅ ՂՈՒՐԶԸ**

Վերջին ամիսներու ընթացքին. Էնկիւրի ոչ միօսմ  
պատկանաց լքեալ գոյքերու աւարտութիւնը, այլ  
և հասարակաց կարգ մը նոր տուրքեր, Իսնայեան  
աակառը լեցնելու համար:

Շահատուրքը, քարուղի և շաքարի մեկաշնորհը,  
սպաման տուրքը և նման կարգադրութիւններ ան-  
սովոր կացութիւն մը կը մասնեն, սոսեսանգան տե-  
սակէտով: Կատարանները միշտ շրջան կ'ընեն քա-  
ղաքէ քաղաք բայց, ստոնք բաւական չեն բոլոր  
ճեղքերը փակելու, և վարչական մեքենան ալ շարժ-  
ման մէջ զրուած է: Կենաքի և մահուան յոճանքին  
մէջ, քէմալական վարիչները միջոցներ կը յղանան  
«բարենորոգումներ» ալ կատարելու, որպէսզի թի-  
կուցը ապահովեն Իեռ վերջերս, Արտահանի երես-  
փոխանը կ'որդար հանդատեան կոչուած պաշտօնեա-  
ներու վիճակին վրայ, Էնկիւրիի պաշտօնաթերթին  
մէջ: Ճշմարիտ բանակ մը կը կազմէ պաշտօնեաներու  
այս դասը, անբուժելի պալար մը՝ թուրք պետու-  
թեան ցաւազար մարմինն վրայ: Տարիներէ ի վեր  
ձրագիրներ կը մշակուին անոնց համար և իրարու  
վրայ կը դիզուին դիւաններու մէջ: Իրբև կանոն,  
գործօն պաշտօնեան անթի է. ո՞ր կը մնայ այն որ  
հանգստեան կոչուած է, և քանի մը սուկ ոտիկ  
ունի: Վերջերս նոր ձրագիր մը պատրաստուեցաւ, որ  
հանգստեան կոչուածներու բարձրագոյն թիւակը կը  
սահմանէ 7500 զրուշ: Արտահանի երեսփոխանը դի-

տել կուտայ թէ հին օրէնքով այդ ոտիկը 5000 զրուշ  
էր, այն ատենուան 50 սուկն հազար սուկի, իսկ այ-  
սորուան 7800 զրուշը հինգ սուկի անգամ չէ, Երեսնե-  
հինգ տարի պետութեան ծառայած և 68 տարեկաւ  
չին հանդատեան կոչուած մեր ամէնէն բարձր պաշ-  
տօնեային թիւակը հինգ սուկի չէ ևւշի զրուար ըլլալոս:

Աւելորդ է իշել թէ՛ Էնկիւրի ինքն էր որ հազար-  
ներով փողոց նետեց ոչ միայն 65 տարեկանները, այլ  
շատ աւելի երիտասարդներ, իրբև անհաստարիմ  
Ուրկէ՛, հիմա, այս մտահոգութիւնը: Իսկ դրամը:

- Եկամտի նոր աղբիւրներ կը հնարուին ամէն օր...  
Գլխաւորը, շահատուրքը (Թէմէթիւ), քիչ-շատ ուսմ-  
կազարական գիծեր կը ներկայայտեն, և նպատակ  
անի մասնաւորապէս Էնկիւրիները սիրաբանելու,  
քանի որ Ա. Ֆէմալի վերջին յոյսը Անատուրի գիւս  
դպիւններն են Այսպէս, շահատուրքէ դրծ կը հոչակ-  
աւին 1. Այն բոլոր հողագործները, որոնք իրենց հողա-  
յին արտադրութիւնները կը ձախեն ստանց խանութ  
բանաւաւ, և ասանց փոխադրութեան միջոցներու...  
2. Այն բոլոր ձկնորսներն ու օրորողները որ նայն ձեռ-  
ւով կը ձախեն... 3. Անոնք որ իրեն պնպուսներու  
արտադրութիւնները կը ձախեն նայն ձեռով... 4. Այ-  
գպպաններն քւպարիկգպպանները... 5. Այն համադր-  
ձակցականները որոնք առևտրական հանգամանք  
լուսին... 6. Անոնք որ իրենց պան մէջ կ'աշխատին,  
ստանց դուրսէն բանուր աշխատցնելու:

Ուրիշ աղբիւր մըն է սպտաման տուրքը, որ պիտի  
գործադրուի 1926 Մայիս 18էն Այս տուրքին ծանրու-  
թիւնը պիտի կրեն առևտրական և սեղանաւորական  
մեծ ճաստարութիւնները, ապահովագրական և փո-  
խադրութեան ընկերութիւնները, յանձնակատարները  
են: Տուրքին համեմատութիւնն է 2½ %, իսկ հիմքը՝  
բոլք և կարտի ծախող կամ նորոգողները, գործի և  
վարկի հաստատութեանց մէջ գեղչի, ասկոնի, վարձ-  
քի, սփութի են. անուսով ամուսած խանն շահերը,  
ինչ որ ալ ըլլան եղած գործողութիւնները:

Իսկ երրորդ աղբիւրը, ինչպէս բնիք, քարիւղի,  
պէնզինի և շաքարի պետական մենաշնորհն է, որ  
գործադրութեան զրուցաւ Փեարը: 7ին: Արդէն կազմ-  
ուած է մենաշնորհի վարչութիւն մը, որ պիտի զնն  
օրէնքին հրատարակութեանն առաջ ապսպրուած ապ-  
բանքները: Այս նպատակով չորս միլիոն սուկի վարկ  
մը պահանջած է հատավարութիւնը:

Իժուար է ըսել թէ որքան արդիւնաբեր պիտի  
ըլլան այս տուրքերը: Չենք խօսիլ ընդհանուր զբժ-  
գորութեան մասին, որ ազգին մէջ խեղդուելու զա-  
տապարտուած է: Ելմտական գործավարը ինք չձա-  
կեց նոր քաղաքականութեան ծանրութիւնը, և պատէ  
պատ գարնուեցաւ, օտար երկիրները օրինակ բերե-  
լու համար: Ամէն երկիր իր դրած տուրքերով ճնշու-  
լու կ'զործէ ժողովուրդին վրայ Բայց, աշխարհի մէջ  
իրենց փառքով և գորութեամբ կը փայլին այն եր-  
կիրները որոնք ամէնէն աւելի կը ճնշուին տուրքերու  
տակ: Գաղաքական անկախութիւնը բախտի շնորհիւ  
չէ որ կ'ապահովուի: Մեր մրցակիցները դիւնուած են  
ամէն աեսակ միջոցներով և յանձնառու խոշոր գո-  
հողութեանց: Մենք ալ ստիպուած ենք զոհողութիւն,

ներ ընել մեր կարողութեան չափ, որպէսզի կարեն նանք դիրք բռնել անոնց դէմ:

Դիրք բռնելու ամէնէն կարեւոր կողմանն է, թուրքիոյ համար, բանակը: Եւ տարակոյս չկայ որ նոր տարբերուն դիտարար ծորակը պիտի հոսի դէպի գօրծաղները եւ գրասենեակները: Ինչ որ կը գրուի ու կը խօսուի տնտեսական ձեռնարկներու կամ հանրօգուտ շինութեանց համար, կը մնայ ծրագիր: Պոլսոյ թուրք մամուլը ամէն օր նիւթ կը գտնէ տնտեսական հիւժու՛մը ապացուցանելու: Այս ուղղութեամբ մասնաւոր հետաքրքրութիւն կը ցուցնէ Աււէտ ձէվտէթ պէյ, հին թուրք մը, որ երկու տարի առաջ Կարսի, Կաղզուանի, Էրզրումի մէջ գործուած անհողութիւնները, քանդուները կը նկարագրէր. իսկ այժմ կ'ողջայ Պոլսոյ վիճակին վրայ: «Վոսփորի եւ Անատոլոյի գծին վրայ գտնուող թուրք տունները այսօր կը փլին. որովհետեւ անոնց տէրերը ամբողջ պաշտօնեայ եւ սպանող էին... Թուրքերը արտադրող չլըլլաւով, իրենց ձեռք անցուցածը չեն կըցած շահագործող եւ այսօր իսկ զբաղաւորուի չունենալով, ուրիշ ազգի վաճառականներու չափ չեն կրնար գործել»: (Իզուամ):

Մասնակի օրինակ մը չէ այս: Պետական տարեցոյցն ալ, որ այս տարի հրատարակուեցաւ, նոյնքան յոռետես իրողութիւններ կը, յայտնէ նախկին մայրաքաղաքի մասին, եւ կ'հերքակացնէ թէ ան վերջի վերջոյ պիտի գտնայ պարզ «Թրանդիթ» ճամբայ մը: «Առաջ Պոլիսը կարեւոր էր իրրեւ թուրքիոյ արտաձման եւ ներաձման կեդրոն, այժմ Իզմիրի, Մերսինի եւ Մամուտի արագ յատակըմոլթիւնը կը շնչէ Պոլսոյ գերագահացութիւնը»: Կարելի էր հարցնել թէ այդ ինչ յատակըմոլթիւնն է որ կատարուէր է Իզմիրի, Մերսինի կամ Մամուտի մէջ, Պոլիսը ստուերի մէջ ձգելու աստիճան, բայց նիւթին չնեղութիւնը: Ընդիրը այն է որ, պաշտօնապէս ալ կը հաստատուի թէ Պոլիսը մահուան դատապարտուած է, եւ թուրքիոյ արեւտեսական կենտրոնը ձանրութեան կեդրոնը պիտի ամփոփուի Անատոլոյի մէջ, ինչպէս եղած է քաղաքականը: Այս պատճառով ալ, թուրքերը ոչ-թուրքերու վաճառականութիւնը դիտատելէ եւ անոնց հարստութիւնները աւարի տալէ յետոյ, կ'աշխատին ուղղակի կապուիլ Եւրոպայի հետ: Բնակչութեան տեսակէտով ալ, կայուն վիճակ չունի Պոլիսը, քանի որ հազիւ մէջ միլիոն բնակիչ կը հաշուէ, որոնց 682,800ը թուրքը:

Տնտեսական կազմալուծման այս փաստերը յիշած ատեն, աւելորդ չէ երկու խօսք ալ ընել ուսուելթուրք առևտարական յարաբերութեանց մասին, որոնք լուրջ խոչընդոտի մը հանդիպողան վերջոր: Ռուսիա արգիւծ է թրքական ապրանքներու ներթաձմը, որ եկամուտի քանուկ աղբիւր մըն էր էնկիւրիէի համար: Թուրք վաճառականութիւնն ու մամուլը մտահոգութեան մատնուած են եւ սնանկութիւններ կը նախատեսեն: Չանազան ձեռնարկներ կատարուեցան, բայց ապարդիւն: Կարծողներ կային, թէ Մոսկուա այս միջոցին դիմած է, առևտարական դաշնագրի բանակցութեանց վրայ ազդելու համար: Բայց պատասխանատու անձ մը, Ռուսիոյ արտաքին նախարարի գործադրութեանը, Պոլսոյ ներկայացուցիչ Պ. Ետրիֆէ խնդիրը կը բացատրէ հիշող այնպէս ինչպէս կ'ենթադրուէր:

Ռուսիա կարկաղրուած է հաւասարակշիւ իր առևտուրը, սահմանափակելով ներածումները: Այս քաղաքականութեան հետեւանքները կրեցին Պարսկաստան եւ թուրքիա: Բայց մինչ առաջինը հարուածը փոխարինեց մերժելով Ռուսերուն յանձնել Կասպեան ծովու ձկնորսարաններու միջնաշնորհը, վերջինը շուրթած զուլիւր քարին կը գարնէ եւ օգնութիւն կը խնդրէ, միլիոնաւոր նարինջներու եւ լեմոններու փճացումէ կը ճառէ: Այս արգելիքին հետեւանքները չափելու համար, կը բաւէ յիշել որ, չորս մամուլան ընթացքին, 1925 շոկտեմբերէն մինչեւ 1926 Յունուարի վերջը, Ռուսիա թուրքերուն գնած է 3,771,000 ոսկիի ապրանք, իսկ անոր ծախած է միայն 1,320,000 ոսկի: Այդ շրջանին Ռուսիա թուրքերէն գնած է 20 միլիոն նարինջ եւ 11 միլիոն լեմոն:

«Գործը գործ է պահանջում»: Մոսկուան բարեկամական, Եղբայրական հաւաստիքներ տալով հանդերձ, կը շարունակէ արդիւնէ թրքական ապրանքներու մուտքը, զոնէ առ այժմ:



«Պահրի եւ Մուսթաֆա տարօրինակ պաղարինոյ ողունեցին իրենց մահավճիռը»:

Նարբերդէն է այս հեռագիրը, եւ պաղտօնական: Անկախութեան դատարանը հարցաքննելով գանոնք, մահուան կը դատապարտէ, իրրեւ մեղաակից քրտական ապստամբութեան (ամբաստանագիրը կ'ըսէ թէ թնշանօթով կրակ բացած են թուրք զինուորներուն վրայ): Իրենց հետ մահուան կը դատապարտուին նաեւ ուրիշ երեք հոգի, որոնք փախստական են: Դատարանը կը գործէ անդադար, թէեւ լրացաւ քրտական ապստամբութեան առաջին տարին: Վճիռները կ'արձակուին եւ կը գործադրուին մեքենայար եւ անագուռէ: Բայց յաճախ կը պատահին երեւոյթներ, որոնք շատ պերճակաւ են: Այդ կարգին է այս մէկը.— «տարօրինակ պաղարինոյ ողունեցին իրենց մահավճիռը»: Այս պարագան ո'րքան կը յիշեցնէ. Տիար պէրիբի կապուկանները, եւ մանաւանդ շէյխ Սայիտի փիլիսոփայական կեցուածքը, որ ե'ւ հեղութիւն կար ե'ւ արհամարհանք: Ուրիշ խօսքով, կ'ապացուցանէ թէ իրապէս մարտական զիծ մը կայ այս անձանօթ կամ զէշ-ձանօթ մարդոց հակացողութեան եւ գործերուն մէջ, զիծ մը որ պիտի զարգանայ, հետզհետէ: Կլիմի թիծուկ արեւնով ու վրէժով: Որքան տեւէ այս «տարօրինակ պաղարինը», այնքան պիտի ծաւալի քրտական շարժումը, որ աւելի մտահոգութիւն կը պատճառէ այսօր, իր խորտակումէն յետոյ:

Ա Ձ Դ

«Իրօշակի» ստաբուլը յաճորդ թւից (թիւ 3) սկսած պիտի դադրեցիլ անխտիր այն բոլոր գործակալների եւ բաժանորդների համար, որոնք մինչեւ առաջիկայ Մարտի 20-ը չեն փակի իրենց հաշիւը առ 1 Յուլիսի 1926 թ.:

«ԴՐՕՇԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ»

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## Հ. Յ. Գ. ԵՂՎԱԿՅԱՆ ԺՐՁ. ԺՈՂՈՂԸ

Յուսարի Յ-Ց, Գահրէի մէջ. քսան պատգամաւորներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ Հ. Յ. Գ. Եղիպտոսի Շրջանային Ժողովը: Նկատելով, որ տեսական եւ ընդհանուր բնոյթ կրող խնդիրները լուծւած են 10-րդ Ընդհ. Ժողովի կողմէ, Շրջանային Ժողովը ուրշեց զբաղել աւելի տեղական ու գործնական բնոյթ ունեցող խնդիրներով եւ աշխատանքի զլխաւոր պարական դարձուց Եղիպտոսի կազմակերպական եւ ազգային-մշակութային հարցերը:

Կենտրոնական կոմիտէի եւ շրջաններու ներկայացուցած զեկուցումներէն պարզեցաւ, որ կազմակերպութիւնն աճէ տեղ, բացառութեամբ Աղեքսանդրիոյ, զգալի կերպով ուժեղացած է, դարձած է աւելի կուռ, ներքին կապն ու համարձակութիւնը կարճած է աւելի մերտ ու կենդանի: Իբրեւ նշանակալից երեւոյթ, որ յատուկ է եւ ուրիշ շրջաններուն, պէտք է արձանագրել այն արտակարգ հետաքրքրութիւնը, որ զկալի Դաշնակցութիւնը ցոյց կուտան երիտասարդութիւնն ու աշխատուոր զանգւածները:

Կենտրոնական եւ շրջակի կոմիտէներու գործունէութեան նիւթական ու բարոյական տեղեկագրերը լսելէ ետք՝ Շրջ. Ժողովը գոհունակութեամբ հաստատեց կատարւած աշխատանքը եւ, իբրեւ գնահատանք, միաձայնութեամբ վերջնորոգեց նախկին կենտր. կոմիտէն ամբողջ կազմով:

Գննութեան առնելով «Յուսաբեր» թերթի խմբագրութեան ու վարչութեան, ինչպէս նաեւ «Յուսաբեր» հրատարակչականի զեկուցումը միամեայ գործունէութեան մասին՝ Շրջ. Ժողովը շեշտեց այն կարեւոր գծեր, որ թէ թերթը եւ թէ հրատարակչականը կատարած են եղիպտոսայ գաղութին մէջ: Միաձայն գնահատանքի առարկայ եղաւ հրատարակչականը, որ մեծ դեր կատարած է մեր կուսակցութեան գաղափարներու տարածման ու ժողովրդականացման տեսակէտէն:

Շրջ. Ժողովի ուշադրութեան առարկայ եղաւ նաեւ եղիպտոսայ գաղութի կազմակերպման գործը, որ ընդունեցաւ ընդարձակօրէն: Ազգային իշխանութիւններու մասին կարեւորած զեկուցումը լսելէ ետք՝ Ժողովը որոշեց Գահրէի յառաջիկայ թեմական ընտրութիւններուն մասնակցել՝ ա՛յն ատեն միայն, երբ գործադրութեան դրւին. օրէնքն ու սահմանադրութիւնը:

Աղեքսանդրիոյ թեմ. Ժողովի դաշնակցական խումբակցութեան զեկուցման արթիւ ընդունումը բանաձեւը կը մատնանշէ, որ «ազգային իշխանութիւնը Աղեքսանդրիոյ մէջ Էրմ գնահատանքի արժանի աշխատանք թափած է շինարարական, ազգային կալաւններու նպատակայարմար օգտագործման, ազգային պոմարներու մատակարարման եւ յատկապէս կրթական գործերու մէջ:

Շրջանային Ժողովը ընթացած ու վերջացած է բարձր արմարութեամբ:

# ԿՐՕՇԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Յ. Գ. Կարպատի մեկ. կոմիտէն 1925-26 տարիներու համար կազմած է դաստիարակութիւններու ու պրօպագանտի ծրագիր մը, որով խումբերը պիտի տանին իրենց պարսպամունքները: Կոս կը ներկայացնենք այդ ծրագրի ամփոփումը.

1. Հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ:  
2. Անդրկովկասի ազգային կազմը եւ հայ ժողովրդը քաղաք., տնտես. եւ մշակութային վիճակը:

3. Հայ ազատագրական շարժումները. (պատմական տեսութիւն, կրիւներու նկարագրութիւն, ազատագրական գրականութիւն, Հ. Հանրապետութեան ծագումն ու կեանքը):

4. Հ. Յ. Գաշնակցութեան զարգացումը (ծագումն ու կեանքը, քաղաքական ու տնտեսական պահանջներ, ազգային-մշակութային խնդիրներ, դասակարգային պայքար, ծրագրային իտիփտութիւններ.):

5. Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ հարեւան ժողովուրդները (հայ-քրտական, հայ-թրքական, հայ-վրացական, հայ-ադրբէյանեան յարաբերութիւններ, 10-րդ Ընդհ. Ժողովի բանաձեւերը):

6. Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Հայաստանի անկախութիւնը:

7. Ընկերվարութիւն եւ ռուսական Կոմունիզմ (աշխարհահայեցողութիւն, ծրագրային ըմբռումներ), գործնականօրէն տարբերութիւններ):

8. Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ քոլչեիզմը (ծրագրային տարբերութիւններ):

9. Հ. Յ. Դաշնակցութիւնն ու գաղութները:

10. Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Հայաստանի վերածինութիւնը:

## Ք Ր Ք Ի Վ Ր Ը Ն Խ Յ Ի Ր Ի

Ա. Ը. Ինտերնասիոնալի քարտուզար ընկ. Աղէրը հաղորդում է, որ անցեալ Նոյեմբերին Հ. Յ. Դաշնակցութեան կողմից Գործադիր Կոմիտէին ներկայացուցած զեկուցադիրը՝ Բրդալիս ինչորի մասին կենդանի հետաքրքրութիւն է առաջ բերել ընկերվարական կուսակցութիւններին մէջ: Նրանցից շատերը իրենց զբաղման ղերքն են որոշել այդ հարցի հանդէպ, իսկ մի քանիսը լրացուցիչ բացատրութիւններ խնդրել: Այս վերջիններին քարտուզարութիւնը հաղորդել է այն տեղեկութիւնները, որ Գործադիր Կոմիտէի վերջին նիստին տեղ է Հ. Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչը՝ հիմնաւորելու համար ներկայացուցած զեկուցադիրը:

Այս ամէնը հաղորդելով զիտութիւն՝ ընկ. Աղէրը խնդրում է Ինտերնասիոնալի քարտուզարութիւնը իրազեկ պահել քրդական շարժման ընթացիկ փուլերին: Իրա հետ միասին նա մեր ուշադրութիւնն է հրաւիրում «Իրօշակ»-ի նախորդ էջերում արձանագրւած պաշտօնական հարազարգութեան վրայ, որ արել է վերոյիշեալ զեկուցադրի առթիւ Վեննայի թիւրքական դեսպանութիւնը «Neue Freie Presse» թերթին: Երկու խնդրի մասին էլ համապատասխան կարգադրութիւններ արւած են Հ. Յ. Գ. Բիբոթի կողմից:

# ԱՃԻԱՏԱՌՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

## ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՐԵԱԼՆԵՐ ԵՒՐՈՊԱՅԻ ԲԱՆԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Die Gesellschaft» ընկերվարական ամսագրում, որ ակա երկրորդ տարին է ինչ հրատարակում է Ռոտդոլֆ Նիլֆերդինգի խմբագրութեամբ եւ գէրմանական ընկերվարութեան համար կատարում է այն դերը, ինչ որ մի ժամանակ կատարում էր Կառլցիկո խմբագրութեամբ լոյս տեսնող (ներկայումս դադարած) «Die Neue Zeit» շաբաթաթերթը — Վլադիմեր Վոյտինսկիի մի շարք յօդւածներում բաւական արժեքատուր թւական տեղեկութիւններ է տալիս միջազգային բանւորութեան վիճակի մասին:

Նրա առաջին յօդւածը, որ լոյս տեսաւ վերոյիշեալ ամսագրի անցեալ տարւոյ հինգերորդ համարում, ներկած է գլխաւորապէս եւրոպական բանւորութեան քանակի, զբաղմունքի եւ կազմակերպական վիճակի ուսումնասիրութեանը:

Ներկայիս այդտեղ նախ յառաջբանի ձեւով քննադատում է այն թւական տեղեկութիւնները, որ բերւած են Կոմիտեաների հրատարակութեամբ լոյս տեսած «Տարեգրքի» մէջ («Տարեգրք տնտեսութեան, բանւորական շարժման եւ քաղաքականութեան») եւ ցոյց տալիս նրանց անհիշեթիւթիւնը, ապա պարզում է իր ուսումնասիրութեան մեթոտները եւ վերջը մէջտեղ դնում իր աղիւսակներն ու նրանց պարզաբանութեան համար անհրաժեշտ մեկնութիւնները:

Այս աղիւսակները եւ ընդհանրապէս բանւորութեան վերաբերեալ թւական տեղեկութիւնները գնահատելու համար կարելու է ամենից առաջ պարզել այն հարցը, թէ ի՞նչ է հասկանում Վոյտինսկիին բանւոր ասելով: Նրա բացատրութեամբ ցանկորդ նա է, ով պարում է իր աշխատանքի ուժը ծախելով իւ աշխատավարձ ստանալով Այս ըմբռնութեամբ բանւոր գասակարգին են պատկանում զործարանային բանւորները, զործարանային պաշտօնեաները (կառավարիչներ, ճարտարապետներ եւն) առեւտրական զործակատարները, պետական թէ հանրային պաշտօնեաները, եւ սպասաւորները, իսկ այդ դասակարգից դուրս են նկատուում կապիտալիստները, կալուծատերերը եւ բոլոր սեփական գործ ունեցողները — անգամ նրանք, որ ոչ ոքի աշխատանքը չեն շահադրծում — եթէ միայն նրանք վարձով չեն գործում:

Այս որոշումն այն անպարմարութիւնն է ներկայացնում, որ բանւորական դասակարգի մէջ է առնում զործարանային կառավարիչներին եւ պետական բարձր պաշտօնեանեկրին, իսկ նրանից դուրս վտարում սալ կաւահաղ գիւղացուն եւ մանր արհեստաւորին: Վոյտինսկիին առաջին անյարմարութիւնը վերացնում է նրանով, որ բացայայտօրէն բանւորական դասակարգին չպատկանող տարրերին դուրս է հանում իր հանդիւնները միջին, իսկ երկրորդ անյարմարութեան վրա-

յից պարզապէս թռչում է ասելով, թէ բանւորը աղքատ չի նշանակում:

Բանւորական դասակարգ տերմինի մասին մենք տարբեր ըմբռնութիւն ունինք, ի հարկէ. բայց այստեղ նպատակ չունինք վեր հանել մեր տարբերութիւնները. այլ միայն ընթերցողի ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ ստորեւ բերւած թւերի մէջ աշխատաւոր գիւղացիութիւնը եւ արհեստաւորութիւնը դեր չեն կատարում:

Այս վերապահութեամբ Վոյտինսկու թւական տեղեկութիւնները, որոնց անցնում ենք անմիջապէս, խիստ շահեկան են ժամանակակից հասարակական շարժումներն ըմբռնելու տեսակէտից: Արժէ, որ մեր ընթերցողները հետաքրքրւին նրանցով, մասւաւնդ որ նրանք քրտնաշան աշխատանքով են ձեռք բերւած եւ իրականութեանը համապատասխանելու բուրջ նշաններն ունին:

Մենք այդ տեղեկութիւնները առաջ ենք բերում մի քանի ակներեւ, հէնց իւր, Վոյտինսկու տեսակերին հակասող սխալների սրբագրութեամբ եւ նիւթի խտացման համար անհմաժեշտ տեխնիքական յաւելումներով կամ յապաւումներով:

Բանւորութեան քանակը Խրոպույոյս 1920-1921ին

Երկիր	Բնակիչ	Քրիստոնէական	Բանւոր	Բանւորներ կէ	100 րոպէս
					է ա զ ա Ր Ե Ա Կ
Ռուսաստան	130000	43000	5-6000	12-15	
Գերմանիա	59000	34000	19000	61	
Մեծ Բրիտանիա	47000	21000	16250	77	
Ճարմանիա	39200	20900	10000	48	
Իտալիա	38800	18300	8200	45	
Լեհաստան	27400	13000	3,5-4000	30	
Սլոակիա	21300	9300	3,2-3600	37	
Ռումանիա	17400	7300	3-3500	15,3	
Չեխոսլովակիա	13600	7000	4100	59	
Իւզուլավիա	11700	5300	2000	40	
Հունգարիա	7900	3300	1800	55	
ԲելՂիկ	7500	3150	2260	73	
Հոլանդիա	6800	2600	1900	62	
Պորտուգալիա	6400	2400	1100	46	
Աւստրիա	6100	3200	2000	63	
Շվեդիա	5200	2350	1300	67	
Յունաստան	5500	2820	800	22	
Բուլղարիա	4900	2510	580	23	
Չեխոսլովակիա	3800	1900	1300	66	
Ֆինլանդիա	3400	1440	850	58	
Դանեմարք	3300	1430	1020	71	
Նորվեգիա	2600	1000	600	60	
Լեւոպոլիս	2400	1250	280	46	
Լատուիա	1600	830	490	23	
Էստոնիա	1100	570	430	23	

Ընդամենը 475,700 208,510 91-93060

Այս աղիւսակի մէջ չեն մտնում եւրոպական

Թիւրքերն, Դանցիկը եւ Լիւքսեմբուրգը, ըստ երեւոյթին տեղեկութիւններէ բացակայութեան պատճառով Սակայն նրանց մէջ դործունակ մարդիկ եւ բանւորներն այնքան փոքր քանակ են ներկայացնում, որ ազդել չեն կարող եւրոպայի այս վիճակաբարեկան պատկերի վրայ:

Աղիւսակից երեւում է, որ եւրոպայում բանւորները գործունակ մարդկանց 45—46 տոկոսն են կազմում. իսկ արեւմտեան եւրոպայում — առանց Ռուսաստանի՝ նրանք կազմում են 35—56 տոկոսը, կամ ուրիշ խօսքով՝ գործունակ մարդկանց մեծամասնութիւնը:

Յետեւեք կիմա թէ այդ բանւորներն ինչ համեմատութիւններով են դասաւորուում անտեսապործութեան այլ եւ այլ ճիւղերի մէջ.

Վիճակ	Արտադրութիւն * Բնութիւն	Ճարտարարեւոյթ ** արեւոյթ	Աւետեւ Տնտեսութիւն	Պաշտօն Տնտեսութիւն	Սպասարար
<b>Հ ա զ ա ր ե ա կ</b>					
Ռուսաստան ***	180	1620	1554	1126	420
Գերմանիա	3800	10450	2510	940	1550
Մեծ Բրիտանիա	800	8800	3960	1155	1800
Ֆրանսիա	2820	3840	1400	900	1010
Իտալիա	3230	2950	765	685	590
Լեհաստան	1500	700	250	300	400
Իսպանիա	1980	640	130	115	300
Ռումանիա	2000	900	200	65	100
Չեխոսլովակիա****	1050	2170	400	300	200
Իւզուղավիա	1150	450	140	120	130
Հոնդուրաս	800	520	190	150	150
Բելճիկ	280	1360	300	130	205
Հոլանդիա	400	800	270	160	280
Պորտուգալ	470	400	70	35	160
Աւստրիա	480	870	330	150	170
Շվեդիա	410	365	115	80	300
Յունաստան	180	235	65	65	55
Բուլղարիա	310	120	55	50	52
Զիլիքերիա	300	660	230	70	30
Ճինիանիա	520	160	60	55	60
Դանեմարք	390	245	155	50	180
Նորվեգիա	220	160	70	30	155
Լիտվանիա	150	60	27	24	135
Լատվիա	100	40	18	16	9
Էստոնիա	70	28	12	11	6
Ընդամենը՝	23,540	38,543	13,006	6782	8258

Այս աղիւսակում յիշատակւած անտեսական ճիւղերի մէջ գործող բանւորների թիւը եթէ իւրաքանչիւր երկրի համար առանձին զուամբնեք՝ կը տեսնենք

\* Արտադրութիւն ըստի առկ հասկացում են այստեղ հոգադործութիւն, անտառաբուծութիւն, ձրկնորսութիւն եւ սրտադրութիւն:

\*\* Ճարտարարեւոյթի մէջ է մտնում եւ հանքազործութիւնը

որ զուամբը մի քանի երկրներում մեծ է նախորդ աղիւսակում ցուցադրած թիւից, իսկ մի քանիսում փոքր: Այսպէս օրինակ՝ ըստ նախորդ աղիւսակի՝ Մեծ Բրիտանիայի բանւորների ընդհանուր թիւն է 16,250 հազար իսկ ըստ այս վերջինի՝ 800 + 8800 + 3960 + 1155 + 1800 = 16,515 հազար, այսինքն 265 հազարով աւելի: Միւս կողմից՝ Գերմանիայի բանւորների թիւն է ըստ նախորդ աղիւսակի՝ 19,500 հազար իսկ ըստ վերջինի՝ 19,250 հազար, այսինքն 250,000-ով պակաս: Այսպէս եւ մնացած երկրներից շատերում: Թէ ինչից են առաջանում այս տարբերութիւնները՝ սակայն չենք կարող որովհետեւ դրա մասին յիշատակութիւն չկայ վճարակազմող յօդուածի մէջ: Բարեբաղդաբար միւս երկրներում նրանք այնքան խոշոր չեն, որ ընդհանուր եզրակացութիւնների վրայ ազդել կարողանան: Այսպէս Ֆրանսիայի համար այդ տարբերութիւնն է — 30 հազար, Իտալիայի համար՝ + 20 հազար, Չեխոսլովակիայի համար + 20 հազար, Զիլիքերիայի համար — 10 հազար են:

Այս տարբերութիւնների խնդիրը մի կողմ թողնելով եթէ մենք եւրոպայի բանւորների դասաւորումը անտեսապործական այլ եւ այլ ճիւղերի մէջ տոկոսային համեմատութիւններով ներկայացնելու չենք՝ վերջին աղիւսակը հետեւեալ պատկերը կտանայ.

Երկիր	Արտադրութիւն	Ճարտարարեւոյթ	Աւետեւ Տնտեսութիւն	Պաշտօն Տնտեսութիւն	Սպասարար
<b>Տ ո կ ս ս ե թ ո վ</b>					
Ռուսաստան	2,7	33,4	32,0	23,2	8,7
Գերմանիա	19,7	54,3	13,0	4,9	8,1
Մեծ Բրիտանիա	4,9	54,2	27,7	7,1	11,1
Ֆրանսիա	27,8	39,5	13,8	8,9	10,0
Իտալիա	39,5	35,6	9,4	8,4	7,2
Լեհաստան	48,0	21,9	8,2	9,6	12,3
Իսպանիա	62,6	20,2	4,1	3,6	9,5
Ռումանիա	61,3	27,6	6,1	2,0	3,1
Չեխոսլովակիա	25,5	52,7	9,7	7,2	4,9
Իւզուղավիա	57,3	26,6	7,0	6,0	6,5
Հոնդուրաս	44,2	28,7	10,5	8,3	8,3
Բելճիկ	12,1	60,0	13,2	5,7	9,0
Հոլանդիա	20,9	41,9	14,1	8,4	14,7
Պորտուգալ	41,4	35,2	6,2	3,1	14,1
Աւստրիա	24,0	43,5	16,5	7,5	8,5
Շվեդիա	33,3	32,6	10,7	4,2	19,2
Յունաստան	30,0	39,2	10,8	10,8	9,2
Բուլղարիա	53,4	21,4	9,8	8,9	4,5
Զիլիքերիա	23,3	51,2	17,8	5,4	2,3
Ճինիանիա	60,8	18,7	7,0	6,5	7,0
Դանեմարք	38,2	24,0	15,2	4,9	17,6
Նորվեգիա	37,0	26,6	11,8	5,0	19,8
Լիտվանիա	37,9	15,1	6,8	6,1	34,1
Լատվիա	54,7	21,9	9,8	8,7	4,9
Էստոնիա	55,1	22,0	9,5	8,7	4,7

\*\*\* Ռուսաստանի արտադրական աշխատուոր-

Այս երկու աղիւսակից երկուսն է, որ սխալ է այն տարածւում կարծիքը, թէ ճարտարաբանտի (ինճուարի) բանւորութիւնը վարձու բանւորութեան մեծամասնութիւնն է և անդիսանում Բազի Բեյլիկից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից, Չեխոսլովակիայից եւ Զիցերիայից, ուր նրանք ընդհանուր բանւորութեան 50 %-ից աւելի են՝ միացած ըլլող երկրներում նրանք փոքրամասնութիւն են կազմում Ընդհանուր Թւերով՝ Եւրոպայի 208 միլիոն զործունակներից եւ 91-93 միլիոն վարձու աշխատաւորներից ճարտարաբանտի բանւորները միայն 38.543 000 հոգի են, ասել է թէ աւելի՛ քիչ, բան առաջինների 1/5 մասը եւ քիչ աւելի վերջինների 1/4 մասից։ Եթէ մենք Ռուսաստանը իբրեւ կիսաեւրոպական եւ զերազանցօրէն երկրագործական երկիր այս հարկից զուրս հանենք՝ կտանանք որ արեւմտեան Եւրոպայում կ'ըլլա թւերով հաշոււմ են.— 165 միլիոն զործունակ, 85-88 միլիոն վարձու բանուր եւ 37 ճարտարաբանտի բանուոր։ Այսինքն, որ անզամ արեւմտեան Եւրոպայում զործունակները շատ են ճարտարաբանտի բանուորներից մօտ 1/2 անգամ, իսկ վարձու բանւորները՝ մօտ 2 1/2 անգամ։

Այս թիւերը շատ հրահանգիչ են պէտք է լինեն այն մարզմանց համար, որոնք ընկերվարական և սարակարգի յոյսը կապում են միայն ճարտարաբանտի բանւորութեան հետ...

Ս, ԱՐԻՍԵԱՆ

### ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԸ

Հունգարական Ընկերվարական Կուսակցութեան կենտրոնական կոմիտէն խորհրդարանի ընկվերով հատուծի հետ միասին մէկ մանիֆեստ է հրատարակել Հորտի'ի կառավարութեան դէմ, որ յետադիմական քաղաքականութեամբ եւ, մասնաւորապէս, կեղծ թղթադրամների գործով հասցրել է երկիրը բարոյական եւ նիւթական անկման։ Կուսակցութիւնը պահանջում է, որ կառավարութիւնը հրաժարւի, եւ ռամկավարական կարգերը վերահաստատուին։ Հունգարիայում Ընկերվարական կուսակցութեան այս յանդուգն կոչը խուճապ է առաջացրել՝ չունգարական Ֆաշիստների շրջանում։ Հորտի'ի զիկտատուրան մասնւած է այնպիսի տագնապի, որ այլ եւս սովորական միջոցներով — հալածանք, բանտ, աքաղոթ — չէ կարողանում վակել ընկերվարականների բերանը։

Ների թիւն այսքան փոքր էր միայն 1920-1921 թւին։ Ներկայումս այդ թիւը շատ աւելի մեծ է ի հարկէ։

\*\*\* Հեհաստանին վերաբերող թւերը մօտաւոր են եւ նւագազոյն չափով վերցրած։

Յունւարի 2-ին փակեց Լեհական Ընկերվարական Կուսակցութեան (P. P. S.) տարեկան համագումարը՝ բազմաթիւ օտար հիւրերի ներկայութեամբ։ Լ. Յ. Դաշնակցութիւնը, որ տարիներից է վեր բարեկամական կապերով կապուած է Լեհական կուսակցութեանը, հեռագրով ողջունեց համագումարի բացումը։

Համագումարը Ինտերնասիոնալի հրահանգների համաձայն որոշումներ հանեց ժընեւի Պայմանագրութեան եւ Լօկարնօի համաձայնութեանց մասին։ Ներքին քաղաքականութեան վերաբերեալ խնդիրներից կարեւորներն են զինուորական ծառայութեան կրճատումը, ռամկավարական կարգերի խորացումն ու պաշտպանութիւնը Լեհական Ֆաշիստների դէմ եւ ազգային փոքրամասնութեանց պաշտպանութիւնը։ Մասնաւորապէս Լեհաստանի իշխանութեան տակ ընկած ուկրաինացիների եւ բելորոսների համար, որոնք անպիսի թիւ են կազմում այդ երկրում, կուսակցութիւնը պահանջում է լայն ինքնավարութիւն։ Ներքին քաղաքականութեան մէջ ամենազիջելի բուրժուական կառավարութեանը մասնակցելու խնդիրն էր։ Զախլախիչ մեծամասնութեամբ (160 ձայն ընդդէմ 40-ի) համագումարը մասնակցելու որոշում է տալիս մինչեւ յայտ տեսակէտից, թէ դա Լուազոյն միջոցն է պաշտպանելու ժողովրդապետական կարգերը յետադիմականների դէմ։

Նորընտրի Կ. Կօմիտէի մէջ աչքի են ընկնուս Պերլ (Նախագահ)՝ Նիէզդիակովսկի (փոխ-Նախագահ) Դաշինսկի, Զայինսկի եւ ուրիշները։

Զիցերական Եօ դր Ծօն քաղաքում վերջիս վախճանեց 85 ամեայ Նուժա Բրանդը, որ Առաջին Ինտերնասիոնալի անդամ է եղել։ Հանդուցեալը մինչեւ իր վախճանի օրերը կենդանի հետաքրքրութեամբ հետեւում էր լուսնորական շարժման իրազարմութիւններին թէ՛ Զիցերիայում եւ թէ՛ արտասահմանում։

Նոր Զելանդայի Ընկերվարական կուսակցութիւնը վերջին ընտրութիւնների ժամանակ շահել է 35,919 նոր ընտրական ձայն։ Կուսակցութեան ստացած ձայների թիւն է 180,067, որ հաւասար է ընտրական ձայների (654,855) 37 %-ին։ Զույսած ձայների ածմանը, կուսակցութեան պատասխանատուների թիւը նւազել է 4-ով, որոհետեւ ազգային եւ բարենորոգչական (ընֆօրմիստ) կուսակցութիւնները բոլի կազմելով՝ մի քանի շրջանում տապալել են ընկերվարական թեկնածուներին։

Ընկերվարական կուսակցութիւններից մի քանիսը կուսակցական զործիչներ պատրաստելու համար հիմնել են սեփական բանւորական համալսարաններ։ Այդպիսի համալսարաններ կան Անգլիայում (Օքսֆորդ) Գերմանիայում (Տից) Բեյլիքում (Ուլիօ) եւն. Յունւարի (7 ին մի բանւորական համալսարան է հիմնադրել եւ Աստրիայում (Վեննա)։ Նորացած համար

սարանի դասընթացը պէտք է տեւէ 6 ամիս եւ ընդգրկէ հետեւեալ առարկաները. քաղաքատնտեսութեան ստեղծման զարգացման պատմութիւն, քաղաքական պատմութիւն, բանտրական շարժման պատմութիւն, լրագրութիւն (ժուրնալիզմ) իրաւունքի տեսութեան վերաբերեալ, բանտրական հաստատութիւններ, թանգարաններ եւ դրադարանները այցելութեանը:

Ուսանողները պէտք է ընտրեն բացառապէս ընդունակ բանտրներից, նրանցից պահանջւում են միայն միջակ գրագիտութիւն եւ նախնական ծանօթութիւն բանտրական կազմակերպութեան վերաբերեալ հարցերում: Համալսարանի վարչութիւնը ոչ միայն պէտք է հոգայ ուսանողների ուսման եւ ապրուստի ծախսերը, այլ եւ, ի պահանջել հարկին, նրանց խնամքին կարօտ ազգականներին պէտք է նպաստ տայ:

Համալսարանի պրոֆեսորների ցանկի մէջ կարգում ենք այնպիսի ակադեմիկոս ընկերաբանների անուններ, ինչպէս Օտտօ Էսուէր, Կարլ Բեններ եւ պրոֆ. Մաքս Ադլէր:

••

Յունւարի 25-ին լրացաւ ընկ. Էմիլ Վանդերվուդի 60 ամեակը: Այդ օրը լոյս տեսած ԲրիտէշէԼ Le Peuple ընկերակազմական թերթը ներկած է ամբողջովին ընկ. Վանդերվուդի կեանքին եւ գործին: Բեւիլթեական վնկերով Կուսակցութիւնը նոյր օրը երեկոյեան ԲրիտէշէԼի ժողովրդական Տանը մեծ շուքով եւ շեքով մթնոլորտի մէջ տօնեց իր հեղինակաւոր առաջնորդի ծննդեան 60 ամեակը: Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրօն հեռագրով իր ողջոյններն ուղարկեց վաստակաւոր ընկերակազմական եւ հայ ժողովրդի սրտացաւ բարեկամին:

### ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ԳՆՂՈՒԹԱԿԱՅ ԱՇԽԱՏԱՌՈՒԹԵԱՆ

Երեւան, 2 Դեկտ. 1925

Միբլի ընկերներ, ես էլ ձեզ պէս դուրս գալով գիւղից, երկար տարիներ աշխատել եմ գործարանում: Ամբողջ 10 տարի, ցարի օրօք եղել եմ Բազում ու պայքարել բռնակալութեան եւ բուրժուազիայի շահագործման դէմ: Բոլորիդ պայտնի է, թէ ինչի համար էինք մենք պայքարում: մենք կաւում էինք դեմոկրատական կարգերի, ծ ժամնայ բանտրական օրւայ, իրոքի ու մտքի ազատութեան համար, մարդկութեան ներդաշնակ զարգացման եւ սոցիալիզմի վերջնական յաղթանակի համար: Այս պահանջները համար մենք կաւում էինք, գործադուլներ յայտարարում: բանտարկւում, աքրտում Միբլի, տաժանակիր աշխատանքների դատապարտում կամ գնդակահարւում:

1919 թ. սկզբին, այսինքն ճիշդ այն ժամանակ, երբ, ինչպէս ասում են, փոքրիկ Հայաստանը իր հիւսնաքովեան վերջին օրերն էր ապրում, ես իմ երկու

ընկերների հետ միասին վերադարձայ Բազուից հայրենիք: Մէկ ամիս գործազուրկ մնալուց յետոյ աշխատանք գտանք, հետզհետէ կարգաւորում էինք մեր կեանքը: Ոնշուշտ տնտեսական լաւ դրութեան մէջ լինք գտնուում. սակայն ազատ շունչ էինք քաշում եւ հրճանքով տեսնում, որ մեր ժողովուրդը օրըստօրէ բարձրանում է, զարգացնում իր տնտեսութիւնը, առողջանում ֆիզիքայապէս եւ իր ապագան կերտում: Շինարարական աշխատանքը տարւում էր ուժեղ թափով, զարգանալու ու յոռաշղիմելու լայն ասպարէզ էր բացւել ամենքի համար: Ժողովրդի բոլոր խաւերը բանւոր, գիւղացի, թէ մտաւորական միմեանց հասկանում էին, յարգում ու աշխատում որքան կարելի է շուտ ոտքի կանգնեցնել իրենց սիրած հայրենիքը: Միացեալ, անկախ եւ դեմոկրատիկ Հայաստանի համար պայքարում էին ոչ միայն Դաշնակցականները, այլ նաեւ հայ Ս. Յեղափոխականները եւ Ս. Դեմոկրատները, իսկ վերջերը մինչեւ իսկ հայ Ռամկավարները: Անկախութիւնը մեր աշխատաւորութեան համար ամենակարեւոր հանգամանքն էր, նրա ապագայ զարգացման եւ բարգաւաճման համար: Անկախութիւնն այն հանգրանն էր, այն պլատֆորմը, որի վրայ միայն կանգնելով՝ հայ աշխատաւորութիւնը ի վիճակէ կը լինէր իրազորել նաեւ իր ծրագիր-մաքսիմումը՝ սոցիալիզմը: Մօտաւորապէս այս դրութիւնն էր տիրում Հայաստանում մինչեւ «կարմիրները» ներխուժումը:

Այդ շարաքաստիկ օրւանից ի վեր շատ բան փոխեց մեր երկրում եւ կեանքում, որոնց դուք, աշխատաւոր ընկերներ, պէտք է իրազեկ մնաք, որպէսզի ձեզ համար հասկանալի լինի այն պայքարը, որ մենք մղում ենք եւ պիտի մղենք եկուր իշխանութեան դէմ: Դրա համար անհրաժեշտ ենք համարում նախ եւ առաջ զգուշացնել ձեզ այն ստայօզ կամ պարզապէս սխալ լուրերից, որ արտասահմանից տարին մի քանի անգամ մեզ այցելող գաւազան բանտրական պատգամաւորութիւններ տարածում են ձեր շրջանում խորհրդային իշխանութեան մասին:

#### ԲԱՆԻՌՄԱԿԱՆ ՊԵՏՎԱՄԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պէտք է վերին աստիճանի միամիտ լինել կարծելու համար, թէ այդ պատգամաւորութիւնները իրենց միտան շիտակ կերպով կատարում եւ հասնում են իրենց նպատակին, եւ անս թէ ինչու Պատգամաւորութիւնները զայլն են եւ ներկայանում իշխանութեան: Սա շրջապատում է գրանց իրայիններով եւ տանում իր ցանկացած տեղերը ցոյց տալիս ինքն է տալիս անհրաժեշտ պարզաբանութիւնները, ինքը կազմակերպում նրանց համար դիմաւորման հանդէսներ, ինքը նշանակում այս կարգերը զովպանող վարձկան հոնտորներին: Այսպիսով, կոմունիստներով շրջապատւած, կոմունիստների մէջ պոռոյտ անելով, լաւ բաժակահատեր լսելուց եւ արտասանելուց յետոյ՝ այդ պատգամաւորները մեքաւանում են իրենց երկրները եւ մտաւորութեան մէջ զգելով գրի աշխատաւորութիւնը, գիտակցաբար կամ անգիտակցաբար դաւաճանում այն աշխատաւորական գաւազաններին, որոնք սքնում են բռնակալ լծի տակ, գիկատաւորայք ճանկերում:

ԱՄԵՐԻԿԱՆ ԴՐՈՒՄԻ ԽՈՐՀՐԻ ԿՐԵՍՈՒՄ

Վերը յիշածն պահանջներին, որոնց համար մենք կուուսմ էինք ցարի օրօք, ո՞րն է իրականացել սոցիալիստական կոչւած Միութեան մէջ: Արդե՞օք Տժամեայ բանտրական օրը: Ո՛չ: Միութեան սահմաններում դեռ շատ զործարաններ կան, ուր ոչ թէ Տ, այլ 11-12 ժամ են աշխատում բանտրները. դա առաջին հերթին սէզոնային բանտրներն են, որոնք սուկալի կերպով շահագործուում են, ստանալով ընդամէնը օրական 50—70 կոպ աշխատավարձ: Իսկ ընդհանրապէս աշխատանքը մինչ-պատերազմեանի հազիւ կէսն է հագումը՝ եթէ նկատի ունենանք այժմեան սուկալի թանկութեանը. — հացի ֆունտը, մինչ պատերազմը 3—4 կոպ. արժէ՛ր, այժմ՛ 8—10 կոպ. շաքարը արժէր 13—15 կոպ. այժմ՛ 33—35 կոպ. եւ այլն:

Փոխելէ՛ն են արդեօք աշխատանքի պայմանները: Ի հարկէ, ոչ. այս բանում համոզելու համար բաւական է միայն համեմատել Բազի միջնակարգ ցարի օրօք եւ այժմ:

Իրենց վիճակը բարելաւելու համար բանտրները պայքարելու իրաւունք ունին: Ո՛չ, որովհետեւ զրա համար նրանք անմիջապէս Չէկա կտանեն կամ, լաւաշարի դէպքում, կ'արձակեն զործից: Կարո՞ղ են բանտրները մի ուրիշ տեղ գնալ աշխատանքի համար: Ո՛չ, որովհետեւ աշխատուոր ձեռքերի կարիքը չի գզացուում, շնորհիւ արդիւնաբերութեան քայքայման. զործագութիւնի թիւը, որոնք բախտ են ունեցել աշխատանքի բորայանում գրեթէ-անհամար է: Չկարծէք, թէ գործագութիւնը երբէք տեղի չեն ունեցել «Միութեան» սահմաններում. ինչպէ՛ս է վարւել իշխանութեանը զործագութիւնների հետ: ձիջն այնպէս, ինչպէս ցարը, եւ դեռ աւելի վատ: Նրանց ձեռքակալին են, հալածել, գնազաններով կտորել: Այսպէս են վարւել Ուրալի հանքերում Դոնբասում եւ ամէն տեղ, ուր բանտրները յանդիման են իրենց աշխատանքի շահագործման գէմ պայքարելու:

Իսկ արհեստագիտական միութիւններն այդ դէպքում ի՞նչ են անում անմիջապէս կը հարցնէք զուք: Արհեստակցական միութիւնները այս երկրում ոչ այլ ինչ են, բաց եթէ մի «կազմակերպ» հիմնարկութիւն, ուր խնդը չարքային անդամներից աշխատանքարժի 3օյօ կարիկադրաբար քանուում են սոված քայլերի պէտ լավում են: Փաստեր կ'ըզէնք հարողացէք հէնց իրեն թերթերը, ուր կատարւած զողովութիւնների մի մտած է միայն արհեստագործում, եւ զուք շատ բան կը հասկնան: Արհմիութեան կրթամարկղը միշտ դատարկ է այս վրանուկների հրեւեղից, իշխանութիւնն իրք թէ կուսում է դրա ղէմ. բայց ի՛նչ աւելի, երբ դողը տնից է, աւելի նողատակահարմար չէ՛՞ ծածկելը, երբ այդ պտտովիները աստիոյաբանիին, այսինքն պատասխանատու ընկերներից են: Թէ որքան է իր բարբութեան վրայ կանգնած այդ միասնաբան աւելալորդ հիմնարկութիւնը—բաւական է աչքի առաւունքնուլ հէնց իրենց, պատասխանատու կրթմանիստներին վերաբերումը զէպի նաւ: Միութեանը զգործերից վերջերս, տոկոսներ չմտցնելու համար, դուրս են արւել — ի՛նչ էք կարծում, ԽճճԻ՛ր է, Ե՛ր Կ. Ծ. ԿճԻ՛ր գերտոյնք քարտուզար Աշտու Յովհաննէսեանը ձոր:

Ճողկում Արամայիս Երզնկեան, Լուսժողովու Մտաւեան եւ այս կարգի ուրիշ «ընկերներն» Ի հարկէ վերջի վերջ նրանց Ծորից ներս կտանեն. բայց մեզ հետաքրքրողը դուրս անհիշու փաստը չէ. այլ դեկափար կոմունիստների վերաբերմունքը գէպի արհմիութիւնը: Ուշաքրաւ խաչատրականութիւններից մէկն էլ այն է, որ վերջերս Երևան եկած անդրիկ. արհմ խորհրդի խնամախոս: Մէնդիքը, մեր միութիւնների խորհրդի նիստին ներկայ գտնւելով՝ ծանր խօսքերով խրատաւում է միութեան զործուսէութիւնը: Իսկ երբ վարչութեան անդամ Մատթէոս Գրիգորեանը պաշտպանուում է անտեղ, թէ իրենց քիչ դրամ են յատկացրել աշխատելու համար, Մէնդիքը արատախանում է: «Եթէ շատ դրամ յատկացնէիք, այն ժամանակ Երևանի բանտերում այլեւս տեղ չէր լինի»: այսինքն բոլոր գողութիւնների համար բանտարկուած կը լինէիք: Ոչ մի կրթական եւ դատաւորային-պատասխարկչական աշխատանք չի տարուում այս միութիւնների մէջ: Մի բանի թօսք էլ կոմունիստների եւ սովորական մարզկանց ոտնիկների մասին. որչանոքիստը պէտք է լաւ ուսի, լաւ խմի, լաւ սարի, Կոչմալի լաւ աստիքի իր դերը «համա շխարհային յեղափոխութեան» գործում: Իսկ ֆիզիկական կամ մտաւոր աշխատանքների բացարձակ մեծամասնութիւնը հազիւ ջաքաթական մէկ անգամ կ'անտուր ճաշ է ունենում, ել չենք խօսում բազմազան ընտանիքների մասին, որոնք ամիսներով մեի երես չեն տեսնում: Աշխատավարձը ստանում են 1—7 կատեգորիաներով: Նազագրայնը չայստատանում 10—15 բուքլի է, իսկ քարտրագրայնը 180 բա: Ի հարկէ այս կատեգորիաների մէջ չեն մտնում կոմունիստները, որոնք այլ եւ այլ եկամուտի ազդիւրներ ունին: Նազագրայն ոտնիկի արժէքը հասկանալու համար պէտք է յիշել այստեղի սուկալի թանկութիւնը. հացի ֆունտը 8—10 կոպ. շաքարը՝ 32—35 կոպ. միսը, տաւուսիներ՝ 20 կոպ. խոզի միսը 30 կոպ. իսկ կտորեղէնը թանկացել է մէկին հինգ, վեց: Կարո՞ղ են այսպիսի պայմաններում մարդիկ լաւ սարել, եթէ անգամ մի կողմ թողնենք նրանց միակուլտուրական պահանջները, ինչպէս թատրոնը, կինան եւ այլն, որոնք վաղից մտացութեան են ենթարկւած աշխատանքի այս համեստ ծառաների կողմից, որովհետեւ այսօր էլ, ինչպէս եւ անցիկում, նրանք արտօսեանքների սեփականութիւնն են կազմում: Ահա այս է մեր ընդհանուր վիճակը: Մրանո՞վ են հիացած ու շլացած արտասահմանեան բանտրական պատգամաբանութիւնները. թէ՛՞ այն յիճուն ճանտով, որոնք մէլ սոցիալիզմ, յեղափոխութիւն, շինարարութիւն, սաքարը դէմոկրատիա են, բոլոր հողովնորով հողովում են՝ պատգամաբանութեանը մեկնելուց յետոյ իսկոյն մտապէտու համար... Սակայն խորհրդային երկրների մասին զազափար կազմելու համար բաւական չէ միայն ծանօթանալ զործարանային բանտրական վիճակի: Աշխատաւորութեան անհրաժեշտ խաւը այստեղ է դեկազցիութիւնը. անհրաժեշտ է նրա վիճակին եւս ծանօթանալ եւ այդ ծանօթութիւնը, ուժերիս լավով, եւ կտամ յաւերք նամակով:

Բանտր ՃՐԱՆՏ

Le Gérant: E. BUAT  
 Imp. TURABIAN 227, BD. RASPAIL PARIS  
 A.R.A.R.®